

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

««ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ իրավական ակտերի նախագծերի հրապակարման միասնական կայքում տեղադրվել է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի [նախագիծը](#) և առնչվող այլ իրավական ակտերի նախագծեր: Ստորև ներկայացվում են հրապարակված նախագծերի վերաբերյալ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպությունների, Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի, Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի դիտարկումներն ու առաջարկությունները:

««ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի նախագծում (Նախագիծ) առաջարկվող ստորև ներկայացված փոփոխությունները, մեր գնահատմամբ, խնդրահարույց են և ենթակա են վերանայման հետևյալ հիմնավորումներով:

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

Հոդված 4. Երևանի տեղական ինքնակառավարման մարմինները, նրանց ձևավորման կարգը, իրավական կարգավիճակը և այլ պաշտոնները զբաղեցնելու սահմանափակումները

- Հոդվածի **2-րդ մասով** սահմանված է, որ ավագանին Երևանում տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմին է, որը «վերահսկողություն է իրականացնում քաղաքապետի գործունեության նկատմամբ»: Սակայն վերահսկողությունը ավագանու լիազորություններից միայն մեկն է, ուստիև նշված ձևակերպումն արհեստականորեն սահմանափակում է տվյալ մարմնի առաքելությունը:

Առաջարկ. *Խմբագրել դրույթը հետևյալ կերպ. «Ավագանին Երևանում տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում քաղաքապետի գործունեության նկատմամբ և իրականացնում է ՀՀ Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված լիազորություններ»:*

- Յոդվածի **3-րդ մասով** սահմանված է, որ ավագանին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով իր լիազորություններն իրականացնելիս «անկախ» է և գործում է միայն ի շահ երևանի և նրա անունից: «Անկախ» որակումը վիճելի է, քանի որ տվյալ օրենքով և դրան առնչվող օրենսդրությամբ ավագանու լիազորությունները սահմանափակ են և հնարավորություն չեն ընձեռում գործել ավագանուն ամբողջովին անկախ:

Առաջարկ. «Անկախ» բառը փոխարինել «ինքնուրույն» բառով:

- Յոդվածի **5-րդ մասով** սահմանված են ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ ավագանու ընտրության կազմակերպմանն առնչվող հարցեր: Սակայն հարկ է նկատել, որ նշված իրավահարաբերությունները գտնվում են ՀՀ ընտրական օրենսգրքի կարգավորման առարկայի շրջանակներում և ենթակա են սահմանման հենց այդ օրենսգրքով (որի համապատասխան կարգավորումները ներկայումս գտնվում են քննարկման փուլում):

Առաջարկ. Նախագծից հանել տվյալ դրույթները՝ համապատասխան իրավակարգավորման մասով հղում կատարելով ՀՀ ընտրական օրենսգրքին:

- Յոդվածի **8-րդ մասի** համաձայն՝ քաղաքապետ կարող է դառնալ 30 տարին լրացած, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող և ավագանու անդամ համարվող այն անձը, որը չունի այլ պետության քաղաքացիություն: Հաշվի առնելով երևան քաղաքի առանձնահատուկ դերը և կարգավիճակը՝ թերևս միայն տվյալ պահին ՀՀ քաղաքացի լինելը բավարար պահանջ չէ, ինչպես որ դա գործում է այլ համայնքների ղեկավարների պարագայում:

Առաջարկ. Նախագծով, ինչպես նաև Ընտրական օրենսգրքով դիտարկել որոշ ժամանակահատվածում (օրինակ՝ 3 տարի) միայն ՀՀ քաղաքացի լինելու և տվյալ ժամանակահատվածում երևան քաղաքում հաշվառված լինելու հանգամանք:

- Յոդվածի **9-րդ մասի** 5-րդ կետի համաձայն՝ քաղաքապետը օրենքով նախատեսված դեպքերում որպես համայնքի (երևանի) ներկայացուցիչ հանդես է գալիս դատարանում՝ ներկայացնելով երևանը՝ որպես համայնք, ավագանին և քաղաքապետարանը, ինչպես նաև իր իրավասության սահմաններում տալիս է դատարանում հանդես գալու լիազորագրեր: Այս դրույթը խիստ խնդրահարույց է՝ հաշվի առնելով ավագանու վերահսկողական գործառույթները և վերջիններիս միջև շահերի բախման հնարավոր իրավիճակները դատարանում: Թեև քաղաքապետն ի պաշտոնե վարում է ավագանու նիստերը և ներկայացնում է համայնքը, նա ավագանու կողմից վերահսկվող մարմին՝ քաղաքապետարանի ղեկավարն է, ուստի նա չի կարող ներկայացնել ավագանին, քանի որ դրանով խաթարվում է կառավարման փոխզսպումների ու հավասարակշռման սկզբունքը: Հատկապես խնդրահարույց է նշված դրույթը ավագանու կողմից քաղաքապետի որոշումների դատական կարգով բողոքարկելու դեպքում և հակառակը:

Առաջարկ. Վերանայել հոդվածի 9-րդ մասի 5-րդ կետը՝ հնարավորություն տալով քաղաքապետին հանդես գալ դատարանում օրենքով նախատեսված դեպքերում միայն որպես համայնքի ներկայացուցիչ:

- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ավագանուն վերապահված են լուրջ իրավասություններ, որոնք ենթադրում են մեծածավալ և պատասխանատու աշխատանք: Միաժամանակ, ավագանու անդամներն աշխատում են հասարակական հիմունքներով (ըստ գործող օրենքի՝ Երևանի ավագանու անդամն իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց իր ցանկությամբ և ավագանու որոշմամբ կարող է ստանալ ամսական դրամական փոխհատուցում ՀՀ նվազագույն աշխատավարձի չափով), ինչը բավարար մոտիվացիա չի ստեղծում նրանց պատասխանատու ներգրավման համար: Ավագանու անդամին նաև ներկայացվում են բարեվարքության պահանջներ (անհամատեղելիության պահանջներ, նվերների հետ կապված և այլ սահմանափակումներ, շահերի բախում), որոնք հասարակական հիմունքներով աշխատանքի պարագայում չեն կարող լիարժեք գործել:

Առաջարկ. Զննարկման առարկա դարձնել Երևանի ավագանու անդամների մշտական հիմունքներով, լիարժեք և անձեռնմխելիության որոշ տարրեր ներառող կարգավիճակի տրամադրման նպատակահարմարությունը և դրան համապատասխան անդամի վճարման հարցը:

Հոդված 5. Երևանում տեղական ինքնակառավարման իրավական հիմքերը

- Հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ տվյալ օրենքով նախատեսված համայնքային քաղաքական, վարչական և հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց «ներկայացվող պահանջների հետ կապված» տվյալ օրենքով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով: Թերևս այս հիմնավորմամբ նախագծում ներառված չէ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» գործող օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասով Երևանի քաղաքապետին ներկայացվող անհամատեղելիության պահանջը, ըստ որի՝ «Քաղաքապետը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից»: Սակայն 5-րդ հոդվածում ամրագրված «ներկայացվող պահանջները» կարող են չվերաբերել վերոնշյալ պաշտոնների խմբերի համար «Հանրային ծառայության մասին» օրենքով ամրագրված սահմանափակումներին և արգելքներին: Արդյունքում՝ հնարավորություն է ստեղծվելու շրջանցել «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները:

Առաջարկ. Վերաձևակերպել հոդվածի տվյալ մասը՝ «ներկայացվող պահանջներին» բառերից հետո ավելացնելով «և սահմանափակումներին» բառերը:

Գլուխ 2. Ավագանին

Հոդված 9. Ավագանու լիազորությունները

- Հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով ավագանին քաղաքապետի ներկայացմամբ որոշում է ընդունում «Երևանի զարգացման հնգամյա և անհրաժեշտության դեպքում այլ ծրագրերի մասին»: Այստեղ «անհրաժեշտության դեպքում» բառերը հարցեր են առաջացնում: Օրինակ, Միջնաժամկետ ծախսային ծրագիրը (ՄԺԾԾ), Համայնքի զարգացման տարեկան ծրագիրը կամ Տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ) ո՞ր դեպքերում է հաստատում և ո՞ր դեպքերում չի հաստատում: Նաև անդրադարձ չկա այդ ծրագրերում կատարվող փոփոխություններին:

Առաջարկ. Հանել «անհրաժեշտության դեպքում» արտահայտությունը, ավելացնել ՀՀ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված այլ ծրագրերի, առնվազն՝ ՄԺԾԾ, Համայնքի զարգացման տարեկան ծրագրի կամ ՏԱՊ-ի և դրանցում փոփոխությունների և լրացումների վերաբերյալ որոշումների ընդունման լիազորությունը:

- Հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված է, որ ավագանին քաղաքապետի ներկայացմամբ որոշում է ընդունում Երևանի սեփականություն համարվող գույքի գույքագրման և կառավարման կարգի վերաբերյալ, որում պետք է նշվեն Երևանի սեփականությունը համարվող գույքի օտարման կամ օգտագործման տրամադրման եղանակը, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը, ընդ որում՝ որոշմամբ օտարման առաջարկվող հողամասերի դեպքում պետք է նշվեն նաև հողամասերի գտնվելու վայրը, ծածկագրերը: Տվյալ կետն անհաջող է ձևակերպված, քանի որ գույքագրման ու կառավարման կարգի մեջ չեն կարող ներառվել օգտագործման նպատակը, ժամկետը, վճարի չափը և մնացած մանրամասները:

Առաջարկ. Վերաձևակերպել տվյալ իրավակարգավորումը՝ վերացնելու անհստակությունը:

- Հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ ավագանին քաղաքապետի ներկայացմամբ որոշում է ընդունում «նախագծման առաջադրանքի, Երևանի գլխավոր հատակագծի և դրա փոփոխությունների հաստատման վերաբերյալ»: Անհասկանալի է, թե ինչ նախագծման մասին է խոսքը:

Առաջարկ. Խմբագրել տվյալ դրույթը հետևյալ կերպ. «Երևանի գլխավոր հատակագծի նախագծման առաջադրանքի, Երևանի գլխավոր հատակագծի և դրա փոփոխությունների հաստատման վերաբերյալ»:

- Հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ ավագանին քաղաքապետի ներկայացմամբ որոշում է ընդունում Երևանի գլխավոր հատակագծին համապատասխան մշակված՝ Երևանի առանձին տարածքների գոտիավորման նախագծերի, ինչպես նաև նախագծման առաջադրանքի վերաբերյալ: «Նախագծման առաջադրանքը» գոտիավորման նախագծերին հակասող և խորհրդային ժամանակներից մնացած հասկացություն է, որի տրամադրման գործընթացը ներառում է [կոռուպցիոն ռիսկեր](#):

Առաջարկ. Նախագծի մշակմանը զուգահեռ անդրադառնալ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենսդրության փոփոխությունների անհրաժեշտությանը՝ վերացնելով տեղական ինքնակառավարման մարմնի կողմից նախագծման առաջադրանք տրամադրելու գործառույթը՝ փոխարենը կատարելագործելով գոտիավորման նախագծերին ներկայացվող պահանջներն ու քաղաքաշինական ստանդարտները և այդ հենքի վրա շինթույլտվությունների տրամադրման գործընթացը:

- Հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն՝ ավագանին քաղաքապետի ներկայացմամբ որոշում է ընդունում այլ քաղաքների և այլ վարչատարածքային միավորների հետ համագործակցության մասին պայմանագրերը հաստատելու վերաբերյալ: Ենթադրաբար, խոսքը վերաբերում է ինչպես ներքին, այնպես էլ միջազգային համագործակցության պայմանագրերին: Սակայն կարևոր է նշել, որ երկու դեպքում էլ պայմանագրեր հաստատելը ինքնին բավարար չէ: Անհրաժեշտ է հետամուտ լինել, որ պայմանագրի կողմերի միջև ձեռք բերած համաձայնությունները կյանքի կոչվեն, և համագործակցությունն իրականություն դառնա:

Առաջարկ. Ավագանու լիազորությունների ցանկում ավելացնել դրույթ, ըստ որի ավագանին նաև իրականացնում է վերահսկողություն նշված պայմանագրերի կատարման նկատմամբ և լսում է համայնքի ղեկավարի հաշվետվությունները:

- Հոդվածի 1-ին մասի 38-րդ կետը «սահմանում է «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով նախատեսված թույլտվությունների տրամադրման կարգը, իսկ տեղական տուրքերի կամ վճարների այն տեսակների, որոնց թույլտվությունների տրամադրման կարգը սահմանված է օրենքով կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանում է լրացուցիչ պահանջներ»: Այսինքն, ստացվում է, որ նախագիծն առաջարկում է օրենքով առկա կարգավորումներին զուգահեռ սահմանել նոր լրացուցիչ պահանջներ սահմանելու լիազորություն: Գտնում ենք, որ նմանատիպ տրամաբանությունը կարիք ունի լրացուցիչ քննարկման ու հիմնավորման:

Առաջարկ. Հիմնավորել և մասնագետների հետ քննարկել տվյալ կետի անհրաժեշտությունն ու դրա հնարավոր հետևանքները:

- Հոդվածի 1-ին մասի 49-րդ կետը սահմանում է Երևանի վարչական տարածքում գործող բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների գործունեության

Նկատմամբ վերահսկողության իրականացման կարգը, պահանջները, պայմանները: Նախ, նախագծի հիմնավորումներում բացակայում է որևէ նշում առաջարկվող կարգավորման նպատակի և ակնկալվող արդյունքների մասին: Բացի այդ, անհասկանալի է, թե ինչ վերահսկողության մասին է խոսքը և ում կողմից է այն իրականացվելու: Ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բարձրագույն մարմինը շինությունների սեփականատերերի ժողովն է, որին պատկանում է բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման բնագավառում ցանկացած հարցի լուծման իրավունքը՝ բացառությամբ այն հարցերի, որոնք, օրենքի համաձայն, համարվում են կառավարման մարմնի բացառիկ լիազորությունը: Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության կառավարումը բաժնային սեփականության սեփականատերերի կողմից օրենքով և իրավական այլ ակտերով, ինչպես նաև պայմանագրերով նախատեսված իրենց իրավունքների, պարտականությունների և պարտավորությունների իրագործումն է, որը կարող է իրականացվել շինության սեփականատերերի կողմից ստեղծված իրավաբանական անձի համատիրության միջոցով, լիազորագրային կառավարչի (ներկայացուցչության) միջոցով, հավատարմագրային կառավարչի միջոցով: Համատիրությունը քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորում է, իսկ լիազորագրային և հավատարմագրային կառավարման հարաբերությունների դեպքում ևս իրականացվում է գույքի կառավարում ի շահ կառավարման հիմնադրի կամ այլ շահառուի՝ կառավարման հիմնադրի հետ կնքված պայմանագրային իրավահարաբերությունների շրջանակներում, ուստի վերջինիս գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու իրավասությունը (բացառությամբ պարտադիր նորմերի կատարման նկատմամբ) պատկանում է բացառապես բաժնային սեփականության սեփականատերերի ժողովին:

Առաջարկ. Հստակեցնել, թե ինչ վերահսկողության կարգ է սահմանվելու ավագանու որոշմամբ: Եթե խոսքը վերաբերում է պարտադիր նորմերի նկատմամբ վերահսկողությանը, ապա այդ մասին հստակ նշել նախագծում:

Հոդված 12. Ավագանու անդամի իրավունքները և պարտականությունները

- Հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում ամրագրված է, որ ավագանու անդամը պարտավոր է մասնակցել ավագանու կողմից անցկացվող Երևանի բնակիչների ընդունելություններին, սակայն ավագանու լիազորությունների շարքում նման ընդունելություն կազմակերպելու որևէ պարտավորություն սահմանված չէ:

Առաջարկ. Ավագանու լիազորությունների շարքում ավելացնել նրա կողմից Երևանի բնակիչների հետ որոշակի պարբերականությամբ (օրինակ՝ 1-2 ամիսը մեկ) հանդիպումների/ընդունելությունների կազմակերպման պարտականությունը:

- Նախագծով ավագանու լիազորությունների շրջանակում հանրային լուսմների անցկացում կարող է կազմակերպվել միայն որոշ իրավիճակներում՝ փողոցների անվանակոչման/անվանափոխման պարագայում և տեղական հանրաքվեի ենթակա հարցերի շուրջ հանրության կարծիքը պարզելու նպատակով: Մեր գնահատմամբ, սա խնդիրների խիստ սահմանափակ շրջանակ է տեղական ինքնակառավարման մարմնի գործունեության պարագայում, որը, ենթադրաբար, պետք է ավելի մոտիկ լինի բնակիչներին և հաշվի առնինրանց տեսակետները տեղական նշանակության շատ ավելի լայն շրջանակի հարցերի դեպքում:

Առաջարկ. Նախատեսել քաղաքապետի, մշտական հանձնաժողովների, խմբակցության կողմից ավագանու լուսմներ/քննարկումներ կազմակերպելու հնարավորություն և ընթացակարգեր՝ քննարկելու քաղաքին առնչվող ռազմավարական բնույթի փաստաթղթերը, պարզացման մոտեցումները, խոշոր ծրագրերը, սույն օրենքում առաջարկվող փոփոխությունները, հանրային կարևորության որոշումների նախագծերը, բյուջեի նախագիծը և կատարողականը՝ սահմանելով դրանց արդյունքների ամփոփման և որոշումների ընդունման գործընթացում հասարակության ներկայացուցիչների կարծիքները հաշվի առնելու (հաշվի չառնելու դեպքում՝ բազմակողման հիմնավորելու) հստակ ընթացակարգեր, ինչպես նաև համապատասխան արձանագրությունների հրապարակման պահանջ:

Հոդված 10. Ավագանու անդամի թափուր տեղը համալրելը

- Հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման կամ դադարման դեպքում այդ մանդատը կենտրոնական ընտրական հանձնաժողովի արձանագրությամբ մեկշաբաթյա ժամկետում տրվում է համապատասխան կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ հորիզոնականում գտնվող անձին: Եթե վերջինս հրաժարվում է մանդատից, ապա նա հանվում է թեկնածուների ցուցակից: Եթե ցուցակում այլ թեկնածու չկա, ապա մանդատը մնում է թափուր: Տվյալ հոդվածը տրամաբանորեն պետք է բխի Ընտրական օրենսգրքից, որը սահմանում է նաև սլոացուցիչ կանոններ, որոնք ներկայացված չեն տվյալ դրույթի շրջանակներում, օրինակ՝ սեռերի ներկայացվածության ապահովման պահանջի մասով:

Առաջարկ. Հոդվածը վերանայել՝ սահմանելով, որ ավագանու անդամի թափուր տեղը համալրվում է Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:

Հոդված 11. Ավագանու լիազորությունների ժամկետը կրճատելը

- Հոդվածի 1-ին մասը նախատեսում է ՀՀ կառավարության կողմից ավագանու լիազորությունները դադարացնելու հնարավորություն, որը կրկնում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումները: Այսպես՝ «ՀՀ կառավարությունը կարող է կրճատել ավագանու լիազորությունների ժամկետը, եթե՝ 1) հերթական նստաշրջանի ընթացքում ավագանու նիստերը երեք ամսից ավելի չեն գումարվում. 2) հերթական նստաշրջանի

ընթացքում ավագանին երեք ամսից ավելի իր քննարկած հարցերի վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում. 3) ավագանին հերթական խոսքերի երեք ամսվա ընթացքում քաղաքապետի ներկայացրած արտահերթ քննարկման ենթակա նախագծի վերաբերյալ որոշում չի կայացնում»:

Գործադիր իշխանության կողմից տեղական ինքնակառավարման ընտրովի մարմնի նկատմամբ նման լծակներ գործադրելու հնարավորությունը առհասարակ խնդրահարույց է և կարող է չարաշահումների տեղիք տալ: Օրինակ՝ տվյալ պահի գործող իշխանության համար ոչ նպատակահարմար տեղական իշխանություն ունենալու պարագայում ՀՀ կառավարությունը կարող է առանց բարդությունների ազատվել տեղական ընտրովի մարմնից:

Առաջարկ. Վերոգրյալ հոդվածից բացառել լայն հայեցողություն տվող և չարաշահման լուրջ ռիսկեր պարունակող՝ 1-ին մասի 3-րդ կետը. «ավագանին հերթական խոսքերի երեք ամսվա ընթացքում քաղաքապետի ներկայացրած արտահերթ քննարկման ենթակա նախագծի վերաբերյալ որոշում չի կայացնում»: Բացի այդ, լրացուցիչ քննարկումներ կազմակերպել մնացյալ հիմքերով Կառավարության՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը վաղաժամկետ դադարեցնելու հնարավորության վերաբերյալ: Տվյալ լիազորությունը հնարավոր պետք է լինի կիրառել միայն ծայրահեղ դեպքերում, երբ համայնքի ավագանին մատնված է անգործության:

Հոդված 12. Ավագանու անդամի իրավունքները և պարտականությունները

- Հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված է, որ ավագանու անդամն իրավունք ունի կատարելու Երևանի բնակիչների ընդունելություն, կազմակերպելու հանրային հանդիպումներ, ընդ որում 15-րդ հոդվածի 3-րդ մասով ավագանու անդամի պահանջով քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը պարտավոր է ամսական առնվազն մեկ օր վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի վարչական շենքերում կահավորված սենյակ կամ դահլիճ հատկացնել Երևանի բնակիչների ընդունելության, ինչպես նաև հանրային հանդիպումներ կազմակերպելու համար:

Հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում նախատեսված է միայն, որ ավագանու անդամը պարտավոր է մասնակցել ավագանու կողմից անցկացվող Երևանի բնակիչների ընդունելություններին: Հաշվի առնելով ավագանու ներկայացուցչական մարմին լինելը՝ ավագանու անդամի քաղաքացիների հետ ակտիվ կապը պահպանելն անհրաժեշտություն է, և պետք է լինի ոչ միայն իրավունք, այլև պարտավորություն:

Առաջարկ. Ավագանու անդամի պարտավորությունների ցանկում ավելացնել Երևանի բնակիչների հետ անհատապես պարբերական հանդիպումների կազմակերպումը:

- Երևանի ավագանու անդամներն, ի տարբերություն այլ համայնքների ավագանիների, ստանում են փոխհատուցում իրենց գործունեության համար, սակայն չկա որևէ հաշվետվողականության պահանջ:

Առաջարկ. Ավագանու անդամի պարտավորությունների շարքում նախատեսել իրականացված աշխատանքի վերաբերյալ հանրային հաշվետվողականության պահանջը, որը պետք է ներառի ծախսերի վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունը:

Հոդված 14. Ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, դադարումը

- Հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (սխալ է համարակալված) համաձայն՝ ավագանու անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել ավագանու անդամների ընդհանուր թվի ծայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, եթե նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից: Տվյալ դրույթը խնդրահարույց է և տեղիք է տալիս չարաշահումների: Բացի այդ, անհարգելի բացակայությունը չափելի չէ, նախատեսված չեն բացակայությունը հարգելի ճանաչելու հիմքերը և չափանիշները: Բացակայող ավագանու անդամների նկատմամբ պրակտիկայում եղել են ընտրողական մոտեցում կիրառելու դեպքեր (օրինակ՝ Հայկ Մարությանի և Չարուհի Փոստանջյանի դեպքերում): Հարկ է արձանագրել նաև, որ բացակայությունների ռեեստր չի վարվում, չկա հստակ վարչարարություն, թե ավագանու անդամի լիազորությունների դադարեցման որոշման նախագծին կից ինչ փաստաթղթեր պետք է ներկայացվեն ավագանու անդամներին:

Առաջարկ. Վերանայել դրույթի ձևակերպումը և ավագանու անդամի լիազորությունների դադարեցման հիմքերը՝ հնարավորինս դժվար իրականանալի դարձնելու քաղաքական հաշվեհարդարի հիմքով ավագանու անդամի լիազորությունների դադարեցումը: Նախատեսել ավագանու անդամների՝ ավագանու և հանձնաժողովների նիստերին մասնակցությունն ու քվեարկությունները արձանագրելու հստակ մեխանիզմներ, բացակայությունները հարգելի համարելու սպառնիչ հիմքեր հայեցողական որոշումները նվազագույնի հասցնելու նպատակով:

Հոդված 15. Ավագանու անդամի գործունեության համար փոխհատուցումն ու գործունեության երաշխիքները

- Հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ավագանու անդամն իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց իր ցանկությամբ և ավագանու սահմանած կարգով կարող է ստանալ ամսական դրամական փոխհատուցում՝ ՀՀ նվազագույն աշխատավարձի եռապատիկի, մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալը և խմբակցության քարտուղարը՝ քառապատիկի, իսկ մշտական հանձնաժողովի նախագահը և խմբակցության ղեկավարը՝ հինգապատիկի չափով: Հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ որպես

Նվազագույն աշխատավարձի հաշվարկային հիմք ընդունվում է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքով սահմանված Նվազագույն ամսական աշխատավարձի չափը: Այս կարգավորումը, ի տարբերություն գործող օրենսդրության, նախատեսում է փոխհատուցման գումարի եռապատկում ավագանու անդամի համար, իսկ այլ հավելյալ գործառույթների իրականացման դեպքում՝ հավելյալ վճարման պահանջ: Անհասկանալի է, թե ավագանու անդամի պարտականությունների կատարման ծախսերն ինչու են կապվում Նվազագույն ամսական աշխատավարձի հետ, արդյոք այդ ծախսերը հիմնավորվում են ֆինանսական փաստաթղթերով, արդյոք դրանք տարբեր են տարվա տարբեր ամիսների համար, ինչ իրավական հիմքեր են դրվում ծախսերի փոխհատուցման համար, ով է իրականացնում նպատակային օգտագործման վերահսկողությունը, ինչպես է փոխհատուցումը կապվում նիստերից բացակայության հետ: Թեև հողվածը ներկայացված է որպես ավագանու անդամի գործունեության համար փոխհատուցման կարգավորում, սակայն փաստացի դժվար է այս գումարը որևէ կերպ փոխկապակցել անդամի կողմից փաստացի իրականացված ծախսերի հետ, իրականում սա քողարկված աշխատավարձի վճարման վերաբերյալ կարգավորում է, որը առաջարկվում է զգալիորեն բարձրացնել սույն նախագծի շրջանակներում: Այս կարգավորումն ունի կարող է որակվել որպես համայնքի բյուջեի միջոցների չհիմնավորված վատնում՝ արհեստականորեն ստեղծելով անտրամաբանական իրավական հիմք, որը հակասում է ոլորտում գործող հիմնարար օրենսդրական ակտերին, մասնավորապես՝ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիային, «Տեղական ինքնակառավարման մասին», «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներին: Բացի այդ, առկա չէ փոխհատուցումների թափանցիկության ապահովման ու հաշվետվողականության որևէ պահանջ:

Առաջարկ. *Օրենսդրությամբ սահմանել ավագանու անդամի իր պարտականությունները կատարելու հետևանքով առաջացած ծախսերի դիմաց փոխհատուցում ստանալու կարգը, դեպքերը, ծախսերի տեսակները, առավելագույն գումարը, հիմնավորող փաստաթղթերը, հաշվետվողականության հստակ և պարտադիր մեխանիզմներ: Վերանայել առաջարկվող փոխհատուցման չափի բարձրացմանն առնչվող կարգավորումը՝ պահպանելով գործող օրենսդրությամբ սահմանված չափերը:*

Հոդված 17. Ավագանու որոշումների, հայտարարությունների, ուղերձների ընդունման նախաձեռնությունը, քննարկումը

- Հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքապետը, ինչպես նաև ավագանու անդամը, ավագանու խմբակցությունը, ավագանու անդամների մեկ երրորդը օրենքով սահմանված դեպքերում կարող են հանդես գալ ավագանու որոշումների, ուղերձների և հայտարարությունների ընդունման նախաձեռնությամբ՝ բացառությամբ օրենքներով միայն քաղաքապետի առաջարկությամբ քննարկվող նախագծերի: Ընդ որում, քաղաքապետի պահանջով իր ներկայացրած նախագիծը քննարկվում է արտահերթ: Հոդվածի 2-րդ մասով ավագանու որոշումների, ուղերձների, հայտարարությունների ընդունումը կարող է նախաձեռնել նաև ավագանու ընտրությունների առումով ընտրական իրավունք ունեցող անձանց ոչ պակաս, քան

մեկ տոկոսը: Հոդվածի **4-րդ մասի** համաձայն՝ որոշումների, ուղերձների և հայտարարությունների ընդունման նախաձեռնությունները քննարկվում են ավագանու նիստում ոչ ուշ, քան 4 ամսվա ընթացքում: Այս ժամկետը չափազանց երկար է, մինչդեռ քաղաքապետի կողմից իր լայն իրավասությունների շրջանակում ներկայացվող բոլոր նախագծերը կարող են քննարկվել արտահերթ: Բացի այդ, սահմանված չէ նաև 4 ամսվա հաշվարկի ելակետը, ինչը կարող է տարընկալման տեղիք տալ:

Առաջարկ. *Կրճատել ավագանու անդամների ու խմբակցությունների կողմից որոշումների, ուղերձների և հայտարարությունների ընդունման վերաբերյալ առաջարկները քննարկելու ժամկետը, ինչպես նաև հստակեցնել ժամկետի հաշվարկի սկիզբը:*

Հոդված 19. Ավագանու հերթական նստաշրջանները և նիստերը

- Հոդվածի **1-ին մասով** ամրագրված են ավագանու հերթական նստաշրջանների ժամկետները, որտեղ յուրաքանչյուր ամիս հրավիրվում է ավագանու առնվազն մեկ նիստ, որոնց օրերը որոշում է ավագանին, իսկ ավագանու որոշած օրը նիստը չկայացած համարվելու դեպքում, հաջորդ նիստի օրը որոշում է քաղաքապետը: Գործնականում կարող է այնպես ստացվել, որ ավագանու նիստերի մեծամասնության օրերը որոշի քաղաքապետը և ոչ թե ավագանին: Հոդվածում նաև խոսք չկա, թե ինչպես են ավագանու անդամները ծանուցվում նիստերի մասին:

Առաջարկ. *Արտահերթ նիստերը գումարել նախագծի 24-րդ հոդվածով սահմանված կարգով: Նախատեսել արտահերթ նիստերի վերաբերյալ ավագանու անդամների ծանուցման կարգը:*

Հոդված 20. Ավագանու հերթական նիստի օրակարգը և որոշման, հայտարարության, ուղերձի նախագծեր ներկայացնելը

- Հոդվածի **2-րդ մասի** համաձայն՝ քաղաքապետի որոշմամբ անհետաձգելի համարվող՝ ավագանու իրավական ակտերի նախագծերը առաջիկա նիստի օրակարգում կարող են ընդգրկվել նիստից առնվազն երկու օր առաջ: Ներկայումս այս հնարավորությունը հաճախ չարաշահվում է, քանի որ անհետաձգելի կարգով հաճախ բերվում են կարևորագույն հարցեր՝ հնարավորություն չտալով ավագանու անդամներին պատշաճ ծանոթանալ այդ նախագծերին և ներգրավվելու դրանց քննարկմանը:

Առաջարկ. *Նախատեսել ընթացակարգ, ըստ որի ավագանու 1/4-րդի պահանջով օրենքով նախատեսված 2-օրյա ժամկետը կարող է երկարաձգվել ևս 2 օրով:*

- Հոդվածի **3-րդ մասի** համաձայն՝ նախաձեռնության հեղինակը պետք է ներկայացնի որոշման, հայտարարության, ուղերձի նախագիծը և «օրենսդրությամբ նախատեսված այլ անհրաժեշտ փաստաթղթերը», ինչպես նաև նախագծի ընդունման անհրաժեշտության հիմնավորումները: Նախագծերի ընդունման անհրաժեշտության

հիմնավորումները պետք է ներառեն դրանց վերաբերյալ մշտական հանձնաժողովների եզրակացությունը, ինչը սակայն հիշատակված չէ այս հոդվածում, ինչպես նաև բացակայում է 27-րդ հոդվածում:

Առաջարկ. *Հստակեցնել ավագանու որոշման, հայտարարության, ուղերձի նախագծեր ներկայացնելիս անհրաժեշտ փաստաթղթերի առկայության պարտադիր պահանջը, ներառյալ դրանց վերաբերյալ համապատասխան մշտական հանձնաժողովների դրական եզրակացության առկայությունը:*

Հոդված 22. Հանրության տեղեկացումը ավագանու հերթական նիստերի մասին

- Հոդվածի **1-ին մասի** համաձայն՝ ավագանու հերթական նիստից առնվազն մեկ շաբաթ առաջ քաղաքապետը Երևանի պաշտոնական համացանցային կայքում հրապարակում է տեղեկություն ավագանու նիստի ժամանակի վերաբերյալ՝ կցելով նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերի մասին որոշման, հայտարարության, ուղերձի նախագծերը: Նախատեսված մեկշաբաթյա ժամկետը համահունչ չէ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված 15-օրյա ժամկետին, ինչը խնդրահարույց է Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման դեպքերում: Նաև տվյալ դրույթը չի նախատեսում հրապարակում Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական www.e-draft.am հարթակում:

Առաջարկ. *Հոդվածով սահմանել ավագանու Նորմատիվ ակտերի վերաբերյալ հանրային քննարկումների նվազագույնը 15-օրյա ժամկետ կամ հղում կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումներին:*

Հոդված 23. Ավագանու նիստը

- Հոդվածի **8-րդ մասի** (սխալ է համարակալված) համաձայն՝ ավագանու նիստը հրապարակային է, սակայն ավագանու կանոնակարգով սահմանված դեպքերում ավագանու նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ծայնների առնվազն կեսով ընդունված որոշմամբ կարող են անցկացվել դռնփակ քննարկումներ: Այս ձևակերպումը Էապես ընդլայնում է դռնփակ նիստեր անցկացնելու հնարավորությունը, ինչը կարող է հանգեցնել դրանց չարաշահման ռիսկի: Ամենևին չբացառելով ազգային անվտանգության կամ այլ իրավաչափ հիմքերով դռնփակ նիստ անցկացնելու անհրաժեշտությունը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենքով նախատեսել հստակ չափանիշներ և/կամ հիմքեր, որոնք կսահմանափակեն ավագանու նիստը դռնփակ անցկացնելու որոշում ընդունելու հայեցողական լիազորությունը: Տեղեկատվության ազատության իրավունքին առնչվող միջազգային չափանիշները ընդգրկում են նաև հանրության իրավունքը՝ տեղեկանալու, թե ինչ գործունեություն են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում իր անունից, և մասնակցելու որոշումների կայացման գործընթացներին: Այս չափանիշներից է բխում ներպետական օրենսդրությամբ

սահմանման ենթակա այն կանխավարկածը, ըստ որի բոլոր ավագանու նիստերը պետք է բաց լինեն հանրության համար, կայացվելիք որոշումների վերաբերյալ տեղեկությունը պետք է նախօրոք մատչելի դարձվի, որպեսզի հասարակությունը հնարավորություն ունենա տեղեկացված կերպով ներգրավվելու գործընթացներին: Մինչդեռ նշված կարգավորումը հակասում է թե՛ վերոգրյալ սկզբունքին և թե՛ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին:

Առաջարկ. *Նախագծում ավելացնել դրույթ, ըստ որի դռնփակ քննարկումներ կարող են տեղի ունենալ բացառապես պետական գաղտնիք պարունակող տվյալների քննարկման ժամանակ, ինչի համար պետք է ներկայացվի համապատասխան հիմնավորում: Դռնփակ քննարկումներ իրականացնելու հիմքերը սպառնալիք կերպով թվարկել այս օրենքի նախագծում՝ առանց երբևէ թողնելու Երևանի ավագանու կանոնակարգի կարգավորմանը: Նախատեսել ավագանու նիստերին շահագրգիռ խմբերի ու փորձագետների մասնակցության հնարավորություններ՝ ներառելով հասարակական կառույցներին և մասնագիտացված կապակերպություններին:*

- Հոդվածի **10-րդ մասի** (սխալ է համարակալված) համաձայն՝ քաղաքապետի տեղակալները և վարչական շրջանների ղեկավարները իրավունք ունեն մասնակցելու ավագանու նիստերին, ունենալ արտահերթ ելույթներ: Գործադիր մարմնի անդամների արտահերթ ելույթների սահմանափակ չլինելու հանգամանքը կարող է խոչընդոտ հանդիսանալ բովանդակային և մասնակցային քննարկումների համար:

Առաջարկ. *Վերանայել քաղաքապետի տեղակալների ավագանու նիստերին արտահերթ ելույթ ունենալու իրավունքը՝ սահմանափակելով միայն առաջին տեղակալի լիազորությամբ կամ նախատեսելով հստակ սահմանափակումներ:*

- Նախագծում խոսք չկա այն մասին, որ ավագանու նիստերի ընթացքում քննարկվող բոլոր հարցերը պետք է զեկուցվեն՝ թերևս բացառությամբ պետական գաղտնիք համարվող տվյալներ պարունակող հարցերի: Մինչդեռ, ներկայիս պրակտիկայում Երևանի ավագանու նիստերին քվեարկվող հարցերի հիմնական մասը, այդ թվում՝ հանրության հետաքրքրություն ներկայացնող ու զգայուն հարցերը, չեն զեկուցվում, ինչը ավագանու գործունեությունը և նրա կողմից ընդունվող որոշումները քաղաքացիների համար կարող է դարձնել անընկալելի:

Առաջարկ. *Ապահովել բոլոր հարցերի հրապարակային ղեկուցումը: Օրենքով նախատեսել հարցերը՝ որպես «չզեկուցվող» դասակարգելու հիմքերը, չափանիշները և համապատասխան հիմնավորումների ներկայացման պահանջը:*

- Նախագծում կարգավորված չէ քվեարկությունների անցկացման կարգը: Գործնականում, հաճախ օրակարգային մի քանի հարցեր քվեարկվում են համատեղ, ինչն անհնարին է դարձնում ավագանու անդամի կողմից առանձին հարցերի վերաբերյալ դիրքորոշման արտահայտումը:

Առաջարկ. Օրենքում սահմանել իրավակարգավորում՝ ըստ որի ավագանու նիստի հարցերը քննարկվում և քվեարկվում են առանձին-առանձին:

Հոդված 25. Ավագանու խմբակցությունների ստեղծման կարգը

- Հոդվածի **1-ին մասի** համաձայն՝ ավագանու խմբակցությունները ստեղծվում են ընտրություններից հետո՝ Նորընտիր ավագանու առաջին նիստի օրը: Սրանից բացի Նոր խմբակցությունների ձևավորում նախատեսված չէ: Հոդվածի **3-րդ մասի** համաձայն՝ խմբակցությունից դուրս գալու հնարավորություն կա, սակայն Նոր խմբակցություն ձևավորելու հնարավորություն նախատեսված չէ՝ չնայած որ կարող է առաջանալ դրա անհրաժեշտությունը:

Առաջարկ. Հոդվածով նախատեսել ավագանու գործունեության ընթացքում Նոր խմբակցությունների ձևավորման հնարավորությունը և կարգը:

Հոդված 27. Ավագանու մշտական հանձնաժողովները

- Հոդվածում նախատեսված չէ կարգավորում առ այն, որ ավագանու մշտական հանձնաժողովների նիստերը պետք է լինեն հրապարակային՝ առնվազն այդ կերպ ապահովելով հանձնաժողովների աշխատանքի վերաբերյալ հանրային իրազեկում և հաշվետվողականություն:

Առաջարկ. Հոդվածում նախատեսել դրույթ, ըստ որի մշտական հանձնաժողովների նիստերը հրապարակային են՝ բացառությամբ այդ դեպքերի, երբ քննարկվում են պետական գաղտնիք համարվող տվյալներ պարունակող հարցեր՝ ապահովելով համապատասխան հիմնավորումներ:

- Հոդվածի **6-րդ մասի** համաձայն (սխալ է համարակալված)՝ «Քաղաքապետը, քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը, վարչական շրջանների ղեկավարը, Երևանի ենթակայության կազմակերպությունները ավագանու մշտական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով պարտավոր են հանձնաժողովին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր ու տեղեկանքներ»: Այս շեմը բավականին և չիմնավորված բարձր է, ինչը գործնականում կարող է խոչընդոտել ավագանու հանձնաժողովների աշխատանքները:

Առաջարկ. Նվազեցնել քաղաքապետի, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի, վարչական շրջանների ղեկավարի, Երևանի ենթակայության կազմակերպությունների կողմից ավագանու մշտական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի պահանջով անհրաժեշտ փաստաթղթեր ու տեղեկանքներ տրամադրելու պարտավորության շեմը և հնարավորություն տալ ավագանու նույնիսկ մեկ անդամի պահանջի դեպքում տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկանքներ:

- Նախագծում որևէ խոսք չկա մշտական հանձնաժողովների գործառույթների մասին: Թեև Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ներառում է հանձնաժողովների գործունեության կարգը, անհրաժեշտություն կա հենց օրենքում ամրագրել Երևանի ավագանու որոշումների նախագծերի վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ, եզրակացություններ տրամադրելու հանձնաժողովի գործառույթը: Նաև նախագծում բացակայում են հանձնաժողովների նախագահների ու տեղակալների գործառույթները՝ չնայած որ 15-րդ հոդվածով սահմանված է նրանց փոխհատուցման տրամադրման կարգը:

Առաջարկ. *Նախագծով ամրագրել Երևանի ավագանու մշտական հանձնաժողովների, ինչպես նաև դրանց նախագահների ու տեղակալների գործառույթները:*

Հոդված 28. Ժամանակավոր հանձնաժողովները

- Հոդվածում նախատեսված չէ, կարգավորում առ այն, որ ավագանու ժամանակավոր հանձնաժողովների նիստերը պետք է լինեն հրապարակային՝ առնվազն այդ կերպ ապահովելով հանձնաժողովների աշխատանքի վերաբերյալ հանրային իրազեկում և հաշվետվողականություն:

Առաջարկ. *Հոդվածում նախատեսել դրույթ, ըստ որի ժամանակավոր հանձնաժողովների նիստերը հրապարակային են՝ բացառությամբ այն դեպքերի, երբ քննարկվում են պետական գաղտնիք համարվող տվյալներ պարունակող հարցեր՝ ապահովելով համապատասխան հիմնավորումներ:*

Հոդված 29. Քննող հանձնաժողովը

- Հոդվածի **2-րդ մասով** նախատեսված է, որ խմբակցությունը քննող հանձնաժողով ստեղծելը կարող է նախաձեռնել օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ: Տարին մեկ անգամ հանձնաժողով ձևավորելու իրավունքը խիստ և չարդարացված սահմանափակում է: Նաև չկա դրույթ, որ քննող հանձնաժողովները պարտավոր են հաշվետվություն ներկայացնել իրենց ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև նախաձեռնել քննարկում/հանրային լսում:

Առաջարկ. *Վերացնել խմբակցության կողմից տարին միայն մեկ անգամ քննող հանձնաժողով նախաձեռնելու սահմանափակումը կամ առնվազն տվյալ սահմանափակումը նախատեսել մեկ նստաշրջանի համար (տարին երկու անգամ): Նախատեսել քննող հանձնաժողովի կողմից ուսումնասիրության արդյունքներն ամփոփող հաշվետվության ներկայացման և այն ավագանու նիստին հրապարակային քննարկելու պահանջ:*

Հոդված 31. Ավագանու անդամի գրավոր և բանավոր հարցերը

- Հոդվածի **1-ին մասի** համաձայն՝ ավագանու և ստաշոջանների ընթացքում ավագանու կանոնակարգով երկու ամսվա մեջ առնվազն մեկ նիստի ընթացքում քաղաքապետը, քաղաքապետի տեղակալները և քաղաքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները պատասխանում են ավագանու անդամների բանավոր հարցերին: Այդ նիստերի սղագրությունը նիստից հետո՝ երեք շաբաթվա ընթացքում, տեղադրվում է քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում: Հոդվածի **2-րդ մասի** համաձայն՝ ավագանու անդամն իրավունք ունի գրավոր հարցեր ուղղելու քաղաքապետին, որն այդ հարցերին պատասխանում է երեք շաբաթվա ընթացքում: Ե՛վ արձանագրությունների, և՛ գրավոր հարցերի պարագայում նախատեսված երեք շաբաթյա ժամկետը չարդարացված երկար է:

Առաջարկ. *Կրճատել երեք շաբաթյա ժամկետը՝ գրավոր հարցեր ու պատասխաններ պարունակող նիստերի սղագրությունները հասանելի դարձնելով առնվազն երկու շաբաթվա, իսկ գրավոր հարցերի պատասխանները՝ մեկ շաբաթվա ընթացքում:*

Հոդված 32. Հրատապ թեմայով քննարկումները

- Հոդվածի **1-ին մասի** համաձայն՝ ավագանու հերթական նիստում ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի պահանջով կարող են անցկացվել հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրատապ թեմայով քննարկումներ: Միաժամանակ, որևէ ակնարկ չկա այդպիսի քննարկումներում հանրային ներկայացուցչություն ապահովելու մասին:

Առաջարկ. *Հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրատապ թեմայով քննարկումներում պարտադիր նախատեսել հանրության իրավելում և շահագրգիռ կողմերի ներգրավվածություն:*

Գլուխ 3. Քաղաքապետը

Հոդված 42. Քաղաքապետի լիազորությունների ընդհանուր բնութագիրը

- Հոդվածի **1-ին մասի 12-րդ կետով** նախատեսված լիազորությունների շրջանակում Երևանի քաղաքապետն իրականացնում է Երևանի սեփականություն համարվող ենթակառուցվածքների կառավարումը և ապահովում դրանց շահագործումը: Սակայն նախատեսված չեն Երևանի սեփականություն չհամարվող, սակայն համայնքում գործող և Երևանի բնակիչներին սպասարկող ենթակառուցվածքների կառավարմանն առնչվող դրույթներ:

Առաջարկ. Քաղաքապետի լիազորությունների շրջանակում նախատեսել Երևան քաղաքի տարածքում շահագործվող և Երևանի բնակիչներին սպասարկող ենթակառուցվածքների կառավարմանն առնչվող դրույթներ՝ միջնորդավորված ապահովելու դրանց անխափան աշխատանքը համապատասխան օպերատորների հետ համագործակցությամբ:

- Հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված է, որ Երևանի քաղաքապետը ՀՀ վարչապետին է առաջարկում օրենքների և այլ իրավական ակտերի նախագծեր: Սույն դրույթը հնարավորություն է տալիս քաղաքապետին հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ՝ առանց հաշվի առնելու պետական լիազոր մարմնի կարծիքը: Ակնարկ անգամ չկա, որ նախագծերը ներկայացվում են նրանց գիտությամբ և եզրակացությամբ:

Առաջարկ. Վերանայել տվյալ դրույթը: Նախատեսել, որ Երևանի քաղաքապետը կարող է ներկայացնել առաջարկներ օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեցող մարմիններին Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման հարցերին իրավական լուծումներ տալու նպատակով կամ որ կարող է Հայաստանի Հանրապետության վարչապետին առաջարկել օրենքների և այլ իրավական ակտերի նախագծեր պետական լիազոր մարմնի եզրակացության հիման վրա:

- Հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «անհրաժեշտության դեպքում», նախատեսվում է աշխատանքային խմբերի ձևավորում, այդ թվում՝ մասնագիտական կառույցների մասնագետների և այլ անձանց ներգրավմամբ, որի տրված եզրակացությունները հիմք են քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրումը կամ ինքնակամ կառույցների օրինականացումը մերժելու համար:

Առաջարկ. Վերանայել տվյալ դրույթը: Մասնագիտական կառույցների մասնագետների ներգրավումը նախատեսել ոչ միայն քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրումը կամ ինքնակամ կառույցների օրինականացումը մերժելու համար, այլև պարտադիր դարձնել այդպիսի կառույցների հետ իրականացվող խորհրդակցությունները քաղաքաշինական փաստաթղթերի վերանայման, կատարելագործման, հաստատման նպատակով:

- Հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով սահմանված է, որ Երևանի քաղաքապետը իրեն կից համապատասխան բնագավառի խորհրդակցական խորհրդի եզրակացության հիման վրա տրամադրում է ավագանու կողմից հաստատված չափորոշիչներից, կանոններից, պահանջներից և սահմանափակումներից բացառություն նախատեսող թույլտվություններ: Այս դրույթը հնարավորություն է տալիս քաղաքապետին շրջանցել ավագանու կողմից քվեարկված և սահմանված չափորոշիչները, կանոնները, պահանջները և սահմանափակումները՝ հղում անելով իր իսկ կողմից նշանակված խորհրդակցական մարմիններին: Այս դրույթը խիստ խնդրահարույց է: Այն պարունակում է կոռուպցիոն ռիսկեր, ինչպես նաև Երևանի քաղաքապետին ընձեռում է քաղաքը միանձնյա կառավարելու հնարավորություն՝ առանց հաշվի առնելու ավագանու կողմից կայացրած որոշումները և ընդհանուր չափորոշիչները:

Առաջարկ. *Հոդվածից հանել 16-րդ կետը:*

- Հոդվածի **1-ին մասի 17-րդ կետով** սահմանված է, որ Երևանի քաղաքապետն ավագանու սահմանած կարգով տալիս է Երևանի վարչական տարածքում կենդանիներ պահելու թույլտվություն: Թեև տվյալ դրույթը մասնակիորեն բխում է ներկայումս առկա իրավակարգավորումներից, այն հիմնավորված չէ: Անհասկանալի է, թե ինչու պետք է քաղաքապետը լիազորություն ունենա տրամադրելու թույլտվություն տնային կենդանի պահելու համար:

Առաջարկ. *Երևանի քաղաքապետի գործառույթներից բացառել կենդանիներ պահելու թույլտվությունը՝ թերևս պահպանելով կենդանիների հաշվառման գործառույթը, եթե դրան փոխկապակցված են քաղաքացիների որոշակի պարտավորություններ (օրինակ՝ կենդանիներին փողոց նետելու կամ աղտոտելու դեպքում):*

- Հոդվածի **2-րդ մասի 1-ին կետի** (սխալ է համարակալված) համաձայն՝ Երևանի քաղաքապետի պատվիրակված լիազորությունների շարքում նախատեսված է, որ նա օրենքով սահմանված կարգով լուծում է Երևանի տարածքում հավաքներ անցկացնելու հարցը: Տվյալ ձևակերպումը սխալ է, քանի որ քաղաքապետը, «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն, պետք է ի գիտություն ընդունի հավաքների կազմակերպիչների կողմից ներկայացվող իրազեկումը, որոշակի պայմանների դեպքում արգելի այն կամ ներկայացնի հավաքը մի շարք սահմանափակումներով անցկացնելու առաջարկ:

Առաջարկ. *Տվյալ դրույթը վերաձևակերպել և հղում անել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքին:*

Հոդված 43. Քաղաքապետի լիազորությունները ֆինանսների բնագավառում

- Հոդվածի **1-ին մասի 1-ին կետի** համաձայն՝ Երևանի քաղաքապետի ֆինանսների բնագավառում ունեցած սեփական լիազորությունների շարքում նշված է, որ նա կազմում է Երևանի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, բյուջեի նախագիծը և սահմանված կարգով ներկայացնում ավագանուն:

Առաջարկ. *Հստակեցնել, որ բյուջեի նախագիծը տարեկան բյուջեի նախագիծն է:*

- Հոդվածի **1-ին մասի 4-րդ կետի** համաձայն՝ Երևանի քաղաքապետն օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի ու հողի հարկի գանձումը, տեղական հարկերի և տուրքերի և իրենց մատուցած ծառայությունների դիմաց վճարների, Երևանի սեփականություն համարվող գույքի օգտագործումից և օտարումից մուտքերի գանձումն ու վերահսկումը: Բյուջետային օրենսդրությամբ փոխվել են հարկերի տեսակները և տվյալ դրույթի ձևակերպումները չեն համապատասխանում նոր եզրույթներին:

Առաջարկ. Վերաձևակերպել հետևյալ կերպ. «*օրենքով սահմանված կարգով կապակերպում է անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի, տեղական հարկերի և տուրքերի և իրենց մատուցած ծառայությունների դիմաց վճարների, Երևանի սեփականություն համարվող գույքի օգտագործումից և օտարումից մուտքերի գանձումն ու վերահսկումը*»:

Հոդված 44. Քաղաքապետի լիազորությունները քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառներում

- Հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառներում Երևանի քաղաքապետի սեփական լիազորությունները ներառում են քաղաքային գերեզմանատների գործունեության կազմակերպումը, մասնավոր գերեզմանատների գործունեության նկատմամբ վերահսկողությունը: Տվյալ դրույթի ընդհանուր և անորոշ ձևակերպումը բավարար չի լուծելու Երևանում գերեզմանային տնտեսությանն առնչվող բազմաշերտ հիմնահարցերը, որոնք նաև խնդիր են շրջակա միջավայրի ու մարդու առողջության պաշտպանության տեսանկյունից:

Առաջարկ. Վերանայել տվյալ դրույթի ձևակերպումը այնպես, որպեսզի այն նախատեսի գերեզմանատների սանիտարական մաքրության ու սանիտարական գոտու/կանաչապատման ապահովումը:

- Հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ Երևանի քաղաքապետը ներկայացնում է ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող պատմության և մշակույթի անշարժ հուշարձան հանդիսացող շենքերը և շինությունները օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան շահագործելու և պահպանելու պահանջներ: Խոսք չկա այն մասին, որ նա պետք է իրականացնի վերահսկողություն քաղաքի տարածքում առկա հուշարձանների պահպանության նկատմամբ:

Առաջարկ. Նախատեսել, որ Երևանի քաղաքապետը պետք է իրականացնի վերահսկողություն քաղաքի տարածքում առկա պատմության և մշակույթի (և՛ պետական, և՛ քաղաքային նշանակության) հուշարձանների պահպանության նկատմամբ՝ համագործակցելով ոլորտի լիազոր մարմնի հետ:

- Նախագծում խոսք չկա Երևանի քաղաքապետի հանրային ներգրավմանն առնչվող գործառնությունների մասին: Մասնավորապես, քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառներում ունեցած լիազորությունների շրջանակում անդրադարձ չկա «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործառնություններին, մասնավորապես՝ հանրային իրազեկման, քննարկումների ու լսումների կազմակերպման պարտավորություններին:

Նախատեսված չէ բյուջետային գործընթացներում հանրության ներգրավման պարտավորություն:

Առաջարկ. *Հոդվածում կատարել լրացում և Երևանի քաղաքապետի պարտադիր լիազորությունների շարքում ներառել դրույթ՝ հղում կատարելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված գործառնություններին, ինչպես նաև նախատեսել բյուջետային գործընթացներում մասնակցության հնարավորություններն ապահովելու լիազորություններ:*

Հոդված 45. Քաղաքապետի լիազորությունները հասարակական կարգի պահպանության բնագավառում

- Հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով Երևանի քաղաքապետի հասարակական կարգի պահպանության բնագավառում ունեցած լիազորություններում նշված է, որ նա «իրավասու է ժամանակավորապես ամբողջովին կամ մասնակիորեն դադարեցնելու Երևանի վարչական տարածքում շենքերի, շինությունների շինարարության (այդ թվում՝ ինքնակամ) վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման աշխատանքները, առանձին ագրեգատների (սարքերի, սարքավորումների և այլն) աշխատանքը»: Տվյալ դրույթում նախատեսված գործողությունների համար սահմանված չեն կոնկրետ լիազորության կիրառման դեպքերը և հիմքերը, ինչը լայն հայեցողություն է ստեղծում չարաշահումների և կոռուպցիոն գործարքների համար:

Առաջարկ. *Ընդլայնել տվյալ դրույթի կարգավորման շրջանակները՝ ներառելով Երևանի քաղաքապետին վերապահված վերոնշյալ գործառնությունների իրականացման դեպքերի և հիմքերի ամրագրումը:*

- Հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը սահմանում է, որ Երևանի քաղաքապետն «իրավասու է կրելու և կիրառելու հատուկ տեխնիկական միջոցներ (սարքեր, սարքավորումներ, առարկաներ, նյութեր): Հատուկ միջոցների ցանկը, դրանք բնութագրող չափանիշները, հատուկ միջոցները գործադրելու դեպքերը, կարգը և դրանք հատկացնելու, հետ վերցնելու, ինչպես նաև հատուկ միջոցները պահպանելու և դրանց պիտանելիությունը պարբերաբար ստուգելու կարգերը սահմանում է Երևանի քաղաքապետը: Հատուկ միջոցներ կիրառելիս հիմք են ընդունվում ՀՀ առողջապահության նախարարի կողմից սահմանված մարդու նկատմամբ գործադրվող հատուկ միջոցների կիրառման համար թույլատրելի չափանիշները»: Տվյալ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հասարակական կարգի պահպանության բնագավառում Երևանի քաղաքապետն իր լիազորություններն իրականացնում է աշխատակազմի ստորաբաժանումների և Երևանի հասարակական կարգի պահպանության մոնիցինգայալ ծառայության միջոցով: Այս կարգավորումը չհիմնավորված կերպով օժտում է քաղաքապետին ուժային կառույցների լիազորություններով:

Առաջարկ. Վերաձևակերպել տվյալ հոդվածը և նախատեսել, որ Երևանի քաղաքապետը կարողանա դիմել ՀՀ ոստիկանությանը՝ կիրառելու հատուկ տեխնիկական միջոցներ (սարքեր, սարքավորումներ, առարկաներ, նյութեր): Հոդվածից հանել «Երևանի հասարակական կարգի պահպանության մոնիցինգայալ ծառայություն» հասկացությունը:

Հոդված 46. Քաղաքապետի գործառույթները հանրային միջոցառումների կանոնակարգման բնագավառում

- Հոդվածի 10-րդ մասում նշվում է, որ քաղաքապետի կողմից հանրային միջոցառման անցկացման այլ վայր առաջարկվելու դեպքում, չպետք է առաջարկվեն կազմակերպիչների ընտրած «համայնքի» տարածքից դուրս վայրեր, իսկ առաջարկվող վայրը հնարավորինս պետք է մոտ լինի տեղեկացման մեջ նշված վայրին: Երևանի պարագայում «համայնք» հասկացության գործածությունը այս համատեքստում հիմնավորված չէ:

Առաջարկ. Նշված դրույթում «համայնք» հասկացությունը փոխարինել «վարչական շրջանով» կամ այլ համապատասխան ձևակերպմամբ:

Հոդված 47. Քաղաքապետի լիազորությունները տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում

- Հոդվածով սահմանված՝ Երևանի քաղաքապետի տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում լիազորությունների շրջանակում անդրադարձ կա տրանսպորտային միջոցներին, դրանց կայանման, վթարների, վճարների վերաբերյալ պահանջներին և այլն, սակայն որևէ տեղ չկա դրույթ, որ քաղաքապետն ապահովում է քաղաքում անվտանգ երևաթևեկության համար բարենպաստ պայմանները, այդ թվում՝ փողոցների ու բակային տարածքների բարվոք վիճակը, բավարար կայանատեղերը, փողոցներում դիտահորերի անվտանգությունը, կառուցապատման թույլտվություններ տրամադրելիս տրանսպորտային հոսքերի հաշվարկը:

Առաջարկ. Ընդլայնել և մանրամասնել Երևանի քաղաքապետի՝ տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում լիազորությունների շրջանակը՝ երաշխավորելու անվտանգ երթևեկության համար բարենպաստ պայմանների առկայությունը:

Հոդված 49. Քաղաքապետի լիազորությունները առևտրի և ծառայությունների բնագավառում

- Հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ «համաքաղաքային կանոններին համապատասխան Երևանի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) տալիս է ժամը 24:00-ից հետո

աշխատելու թույլտվություն: Տվյալ դրույթը ևս չի հստակեցնում քաղաքապետի կողմից նման որոշումների ընդունման հիմքերը, ինչը կարող է հանգեցնել դրույթի հայեցողական կիրառման, կոռուպցիոն ռիսկերի ու տնտեսական մրցակցության խաթարման:

Առաջարկ. Վերանայել տվյալ մասում նշված դրույթի նպատակահարմարությունը և կամ օրենքով սահմանել հստակ չափորոշիչներ՝ կոռուպցիոն ռիսկերը վերացնելու և մրցակցությունը չխաթարելու նպատակով:

Յոթված 51. Քաղաքապետի լիազորությունները առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում

- Յոթվածի 1-ին մասով սահմանված՝ Երևանի քաղաքապետի պարտադիր լիազորությունների շրջանակում ներառված են համայնքի տարածքում համաճարակների կամ դրանց վտանգի դեպքում հատուկ ռեժիմի պահանջների կատարումը և «Հանրային առողջապահության մասին» օրենքի 17-րդ հոդվածով սահմանված կարգով որոշման ընդունումը: Յոթվածի 2-րդ մասով (սխալ է համարակալված) սահմանված պատվիրակված լիազորություններում նշված է պասիվ գործունեություն՝ այն է, որ Երևանի քաղաքապետը «օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման համակարգի լիազոր մարմնի, այդ թվում՝ վերջինիս ենթակայությամբ գործող բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման կամ հանրային առողջության բնագավառում գործունեություն իրականացնող պետական կազմակերպությունների միջոցով իրականացվող կանխարգելիչ, հակահամաճարակային և կարանտին սահմանելու դեպքում կիրառվող սահմանափակող միջոցառումների իրականացմանը»: Միաժամանակ, «Հանրային առողջապահության մասին» օրենքում առողջապահության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված են մի շարք լիազորություններ, որոնք տեղ չեն գտել նախագծում որպես պարտադիր լիազորություններ: Այսպես, տվյալ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է. «Բնակչության ջրօգտագործման աղբյուրների աղտոտումը կանխարգելելու և վերացնելու նպատակով պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները սահմանում են սանիտարական պահպանման գոտիներ՝ հատուկ ռեժիմով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան»: Նույն օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է. «Պետական կառավարման համակարգի, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի, միջազգային կազմակերպությունների կողմից բնակելի, հասարակական և արտադրական շենքերի, շինությունների, կառույցների նախագծման, շահագործման ընթացքում պետք է պահպանվեն շրջակա միջավայրի գործոններին (ներառյալ ֆիզիկական գործոններին՝ աղմուկի, վիբրացիայի (թրթռման), ինֆրաձայնի և ուլտրաձայնի մակարդակին, ուլտրամանուշակագույն, տեսանելի լույսին, ինֆրակարմիր, ռադիոհաճախականության ճառագայթումներին, ցածր

հաճախականության ու ստատիկ էլեկտրական և մագնիսական դաշտերին) ներկայացվող հանրային առողջապահական նորմատիվների պահանջները»: Վերջինը հատկապես կարևոր է Երևանի քաղաքապետի կողմից քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր մշակելու և կառուցապատման թույլտվությունների տրամադրման համատեքստում:

Առաջարկ. Երևանի քաղաքապետի լիազորության շրջանակում ներառել «Հանրային առողջապահության մասին» օրենքով սահմանված լիազորությունները:

Հոդված 53. Քաղաքապետի լիազորությունները շրջակա միջավայրի պահպանության բնագավառում

- Հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Երևանի քաղաքապետը շրջակա միջավայրի պահպանության բնագավառում իր սեփական և պատվիրակված լիազորությունների շրջանակում մշակում և իրականացնում է շրջակա միջավայրի պահպանության համայնքային ծրագրեր, աջակցում է Երևանի տարածքում գտնվող արգելոցների, արգելավայրերի հատուկ պահպանվող գոտիների, անտառային տարածքների պահպանությանը և օգտագործմանը, այդ տարածքներում որսագողության, ապօրինի ձկնորսության, ծառահատումների դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը: Հոդվածում բացակայում են քաղաքային կառավարման համատեքստում անհրաժեշտ մի շարք լիազորություններ, ինչպես օրինակ՝ աղտոտման ու աղբոտման կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումը, շրջակա միջավայրի աղտոտման բացահայտման դեպքում դրանց վերաբերյալ տեղեկացումը լիազոր մարմիններին, ջրային օբյեկտների մաքրումն ու պահպանությունը, «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների՝ ռեկուլտիվացիայի ծրագրին համաձայնություն տալը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, այդ թվում՝ հիմնադրույթային փաստաթղթի նախագծի կամ նախատեսվող գործունեության, դրանց ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացների վերաբերյալ ծանուցման, հանրային լուսմների կազմակերպման և շահագրգիռ հանրության մասնակցության պայմանների և պահանջների ապահովումը:

Առաջարկ. Վերանայել և ընդլայնել շրջակա միջավայրի պահպանության բնագավառում Երևանի քաղաքապետի լիազորությունները՝ հիմք ընդունելով առնչվող իրավական ակտերում նախատեսված գործառույթները, ինչպես նաև Երևան քաղաքում բարվոք ու անվտանգ շրջակա միջավայրի ապահովմանն ուղղված այլ գործառույթների իրականացման անհրաժեշտությունը:

Հոդված 54. Քաղաքապետի հարաբերությունները պետական կառավարման համակարգի մարմինների և դրանց Երևանի տարածքային ծառայությունների հետ

- Հոդվածի 5-րդ մասով նախատեսված է, որ Երևանի քաղաքապետը պետական կառավարման համակարգի մարմինների և դրանց Երևանի տարածքային ծառայությունների հետ հարաբերություններում «իրավունք ունի» պետական կառավարման համակարգի մարմին ներկայացնելու գրավոր, փաստարկված առաջարկություն՝ վերջինիս տարածքային ծառայության գործունեության վերաբերյալ:

Առաջարկ. Տվյալ ձևակերպումը խմբագրել հետևալ կերպ. ««քաղաքապետը պետական կառավարման մարմինն ներկայացնում է ...»:

Հոդված 55. Քաղաքապետի լիազորությունները արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառում

- Հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառում սահմանված Երևանի քաղաքապետի սեփական լիազորությունների մեջ նշված է, որ քաղաքապետը քաղաքացիական պաշտպանության պետն է և որ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների բնագավառում քաղաքապետն իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով և բնագավառը կարգավորող այլ օրենքներով համայնքի ղեկավարին վերապահված լիազորություններ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածով նախատեսված սեփական և պատվիրակված լիազորությունները ներառում են միջոցառումների իրականացումը համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով, համայնքի բնակչության ազդարարումը, համայնքի քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորումը և իրականացումը, համայնքի բնակչության տարահանումը, բնակչության պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը, համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծումը և այլն: Սակայն օրենքը չի ներառում կամ հստակ չի ամրագրում համայնքում արտակարգ իրավիճակների կանխարգելիչ ու նախապատրաստական աշխատանքների ապահովումը (օրինակ՝ հեղեղատարների կառուցումն ու մաքրումը, թաքստոցների կառուցումն ու բարվոք վիճակի ապահովումը, հանրության կրթումը անվտանգային թեմաներով), որը կերաշխավորեր նախագծով ամրագրված լիազորությունների իրականացումը: .

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով նախատեսված է, որ տեղական ինքնակառավարման մարմինները

կազմակերպում են համայնքի բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում, իրականացնում են վթարային և վերականգնողական միջոցառումներ արտակարգ իրավիճակներում համայնքային ենթակայության կենսաապահովման օբյեկտների անխափան աշխատանքն ապահովելու համար, իրականացնում են արտակարգ իրավիճակների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումներ համայնքի տարածքում, իրականացնում են համայնքի բնակչության ազդարարումն արտակարգ իրավիճակներում և այլն: Այս օրենքում ևս ամրագրված չէ, որ տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատու են արտակարգ իրավիճակները կանխարգելելու և բնակչության պաշտպանությունը նախապատրաստելու համար:

Առաջարկ. *Նախագծում, ինչպես նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում ամրագրել դրույթ, որով տեղական ինքնակառավարման մարմինների վրա կդրվեն իրենց համայնքներում արտակարգ իրավիճակները կանխարգելելու, դրանց նախապատրաստվելու և հետևանքների վերացման միջոցառումներին համայնքի բնակիչների կամավոր մասնակցությունը համակարգելու կոնկրետ պարտականություններ: Արտակարգ իրավիճակներին նախապատրաստումը պետք է ներառի ենթակառուցվածքների ապահովումը և կահավորումը (այդ թվում՝ աշխատելով նկուղային տարածքների համար պատասխանատու համատիրությունների և/կամ մասնավոր սեփականատերերի հետ, իսկ այդպիսի թաքստոցներում պատսպարման հնարավորություն չունեցող անձանց համար նախատեսելով անհրաժեշտ քանակով համայնքապատկան թաքստոցներ), հանրության կրթությունը և արտակարգ իրավիճակներում դիմակայելու գործնական հմտությունների պարզացումը:*

Հոդված 58. Քաղաքապետի՝ համայնքի կամավոր խնդիրների լուծմանն ուղղված լիազորությունները

- Հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Երևանի քաղաքապետը տվյալ օրենքով սահմանված սեփական և պետության պատվիրակած լիազորություններից բացի, օժտված է նաև ավագանու սահմանած կամավոր խնդիրների լուծմանն ուղղված լիազորություններով: Հոդվածի 2-րդ մասով համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանվում են քաղաքապետարանի կանոնադրությամբ:

Առաջարկ. *Հոդվածով նախատեսված «քաղաքապետարանի կանոնադրությամբ» բառակապակցությունը փոխարինել «քաղաքապետի ներկայացմամբ՝ ավագանու կողմից հաստատված առանձին կարգով» բառակապակցությամբ:*

Գլուխ 4. Երևանի սեփականությունը, բյուջեն և զարգացման ծրագիրը

Հոդված 59. Երևանի սեփականությունը

- Հոդվածի **2-րդ մասի** համաձայն՝ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով Երևանի սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ»: [Պրակտիկայում](#) հանրության գերակա շահերի անվան տակ օտարման գործընթացները Հայաստանում տեղի են ունենում առանց շահագրգիռ հանրության ներգրավման, հանրության գերակա շահի շահառուների շարքում հաճախ հայտնվում են կասկածելի կենսագրություն ու պատմություն ունեցող անձինք ու կազմակերպություններ:

Առաջարկ. Ավելացնել, որ գերակա շահերի ապահովման նպատակով Երևանի սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ շահագրգիռ կողմերի հետ հանրության գերակա շահը հիմնավորող խորհրդակցությունների արդյունքում: Նախատեսել, որ, ըստ անհրաժեշտության, «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու միջոցով գույքի օտարման նպատակի իրագործումն ապահովվի բացառապես մրցույթի և ձեռքբերողների նախկին գործունեությունը համապատասխան ոլորտի պետական կառավարման մարմնի կողմից ստուգելու (due diligence) միջոցով՝ նվազեցնելու սովերային պայմանավորվածությունները:

- Հոդվածի **4-րդ մասով** Երևանի քաղաքապետն ավագանու հաստատմանն է ներկայացնում Երևանի սեփականություն համարվող գույքի կառավարման կարգը, դրան համապատասխան տնօրինում է Երևանի սեփականություն համարվող գույքը:

Առաջարկ. Փոխարինել «տնօրինում է» բառը «տիրապետում, օգտագործում և տնօրինում է» բառակապակցությամբ:

- Հոդվածի **5-րդ մասի** համաձայն՝ Երևանին նվիրատվությամբ կամ նվիրաբերությամբ տրվող գույքն ընդունվում է քաղաքապետի որոշմամբ: Կարգավորված չեն նվիրատվության և/կամ նվիրաբերության պայմանները, ինչպես նաև սահմանված չէ գույքի պատշաճ հաշվառման մասին պահանջ:

Առաջարկ. Ավելացնել դրույթ, որ գույքը հաշվառվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Նաև ամրագրել, որ նվիրատվությունը կամ նվիրաբերությունը չի կարող զուգակցվել/կապվել նվիրատուներին/նվիրաբերողներին տրամադրվող արտոնությունների, թույլտվությունների կամ այլ ծառայությունների հետ:

Հոդված 59. Երևանի բյուջեն

- Հոդվածի **3-րդ մասով** սահմանված է. «Բյուջեն բաղկացած է վարչական և ֆոնդային մասերից: Բյուջեն կատարվում է օրենքով սահմանված կարգով»: Մինչդեռ ոչ միայն բյուջեի կատարումը, այլ նաև բյուջեի կազմումը, քննարկումը, հաստատումը, կառավարումը սահմանված են ՀՀ օրենսդրությամբ:

Առաջարկ. *Տվյալ դրույթը ձևակերպել հետևյալ կերպ. «Բյուջեն կազմվում, քննարկվում, հաստատվում և կառավարվում է ՀՀ բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով»:*

- Հոդվածի **5-րդ մասով** «Տվյալ տարվա համար հաստատվող Երևանի բյուջեում սույն օրենքի 62-րդ հոդվածում ներկայացված մուտքերի աղբյուրներից (մի շարք բացառություններով) միջոցների ստացումների ընդհանուր ծրագրված ծավալի առնվազն 3 տոկոսը նախատեսվում է համայնքի կամավոր խնդիրների լուծման նպատակով սահմանված լիազորությունների ֆինանսավորման համար»: Տվյալ ձևակերպումը չի մասնավորեցնում որևէ նպատակ, սակայն, հաշվի առնելով քաղաքացիների ներգրավվածության կարևորությունը ժողովրդավարական կառավարման համար, այդ թվում՝ մասնակցային բյուջետավորումը, անհրաժեշտ է հստակեցնել տվյալ պահանջը և այդ նպատակով նախատեսել կայուն ֆինանսական հատկացում:

Առաջարկ. *Հոդվածի տվյալ դրույթի ձևակերպման մեջ «կամավոր խնդիրների լուծման նպատակով սահմանված լիազորությունների ֆինանսավորման համար» արտահայտությունից հետո ավելացնել հետևյալը. «ընդ որում՝ այդ միջոցների առնվազն 1-1,5 %-ը տոկոսը պետք է ուղղվի որոշումների ընդունման գործընթացում հանրային ներգրավման միջոցառումներին, այդ թվում՝ մասնակցային բյուջետավորման ապահովմանը»:*

Հոդված 60. Երևանի բյուջեի քննարկումը և հաստատումը

- Հոդվածի **2-րդ մասի** համաձայն՝ «Երևանի բյուջեի նախագիծը քննարկվում է ավագանու օրենքի ուժով հրավիրվող նիստում, որը տեղի է ունենում նստաշրջանի վերջին օրվա նախորդող շաբաթվա երեքշաբթի օրը, իսկ բյուջեի նախագծի քննարկման կարգը սահմանվում է օրենքով և ավագանու կանոնակարգով»: Բյուջեի նախագիծը մինչև ավագանու կողմից քննարկումը և հաստատումը, համաձայն ՀՀ բյուջետային օրենսդրության, պետք է անցնի հանրային քննարկումների փուլ, որի համար կա մշակված և կիրառության մեջ դրված նոր օրինակելի կարգ (այն տեղադրված է ՀՀ ՏԿԵՆ-ի պաշտոնական համացանցային կայքում): Երևանի ավագանին ևս պետք է այդ կարգը հաստատի և մտցնի գործողության մեջ:

Առաջարկ. *Հոդվածի նշված դրույթից առաջ ավելացնել ևս մեկ մաս բյուջեի նախագծի հանրային քննարկումների ապահովման վերաբերյալ (վարչական շրջաններում՝*

առկա/կենդանի ձևաչափով և/կամ Երևանի պաշտոնական համացանցային կայքում՝ առցանց ձևաչափով և/կամ հիբրիդային ձևաչափով):

- Հոդվածի **5-րդ մասի** համաձայն՝ «Բյուջետային տարվա ընթացքում քաղաքապետը կարող է տվյալ տարվա Երևանի բյուջեի մասին ավագանու որոշմամբ հաստատված հատկացումների ընդհանուր գումարի մինչև 10 տոկոսի սահմաններում վերաբաշխել հաստատված հատկացումների գումարները այդ որոշմամբ սահմանված ծախսային ծրագրերի միջև: Բյուջետային տարվա ընթացքում քաղաքապետը կարող է կատարել յուրաքանչյուր ծրագրի գծով Երևանի բյուջեի մասին ավագանու որոշմամբ սահմանված հատկացումների ընդհանուր գումարի 17 տոկոս չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ տնտեսագիտական դասակարգման հոդվածների միջև, եթե տվյալ տարվա Երևանի բյուջեի մասին ավագանու որոշմամբ այլ բան նախատեսված չէ»: Հոդվածը քաղաքապետին տալիս է անհիմն լայն հայեցողական լիազորություն՝ թույլ տալով վերաբաշխել բյուջեի միջոցների 10 %-ը ծրագրերի միջև և 17 %-ը՝ տնտեսագիտական դասակարգման հոդվածների միջև: Համեմատության համար պետք է նշել, որ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով ՀՀ կառավարությանը թույլատրվում է առանց ԱԺ-ի համաձայնության վերաբաշխել տվյալ տարվա պետական բյուջեի միայն 3 %-ը: Նման լայն հայեցողությունը, ընդ որում առանց ավագանու որոշման, կարող է նվազեցնել ավագանու վերահսկողությունը բյուջեի կատարման նկատմամբ և հանգեցնել չարաշահումների:

Առաջարկ. *Տվյալ դրույթի իրավակարգավորման մեջ 10 %-ի փոխարեն սահմանել 5 %, իսկ 17 %-ի փոխարեն՝ 10 %-՝ յուրաքանչյուր տարվա բյուջեն քննարկելիս և հաստատելիս վերաբաշխման ծավալների փոփոխությունը վերապահելով ավագանու որոշմանը:*

Հոդված 61. Երևանի բյուջեին ներկայացվող պահանջները

- Հոդվածը սահմանում է Երևանի բյուջեի պահանջները, սակայն չի պարտադրում, որ բյուջեն կազմվի ծրագրային ձևաչափով: Մինչդեռ ծրագրային բյուջետավորումը միջազգային պրակտիկայում համարվում է ավելի ընկալելի, թափանցիկ և արդյունավետ բյուջեի կատարումը վերահսկելու համար, քանի որ հնարավորություն է տալիս հստակ կապել ծախսերը կոնկրետ ծրագրերի և արդյունքների հետ: Ավելին, Հայաստանի Հանրապետությունը 2018 թ.-ից սկսած պետական բյուջեն կազմելիս լիովին անցել է ծրագրային բյուջետավորման, և ցանկալի կլիներ, որ առնվազն հանրապետության ամենամեծ և ազդեցիկ համայնքը Նույնպես անցներ այս ձևաչափին: Ծրագրային բյուջետավորման պարտադիր ներդրումը կբարձրացնի բյուջեի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, կհեշտացնի բնակչության և ավագանու կողմից բյուջեի կատարման վերահսկողությունը՝ համապատասխանեցնելով Երևանի բյուջետային գործընթացը միջազգային լավագույն փորձին:

Առաջարկ. Հոդվածում ավելացնել նոր մաս հետևյալ ձևակերպմամբ՝ «Երևանի բյուջեն կազմվում է ծրագրային ձևաչափով սահմանված պահանջների համաձայն՝ ապահովելով ծախսերի կապը կոնկրետ ծրագրերի և սպասվող արդյունքների հետ»:

Հոդված 62. Երևանի բյուջեի ձևավորման աղբյուրները

- Հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Երևանի բյուջեն ձևավորվում է օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող մուտքերի աղբյուրներից, ներառյալ՝ 1) հողի հարկ՝ Երևանի վարչական տարածքում գտնվող հողի համար. 2) գույքահարկ՝ Երևանի վարչական տարածքում գտնվող գույքի համար: Պետք է նշել, որ ՀՀ բյուջետային օրենսդրությամբ փոխվել են հարկերի տեսակները՝ համապատասխանաբար անշարժ գույքի հարկը (հողի հարկ + գույքահարկ) և փոխադրամիջոցների գույքահարկը (համայնքի վարչական տարածքում հաշվառված փոխադրամիջոցների համար), սակայն նախագծում նշված ձևակերպումները չեն համապատասխանում գործող օրենսդրության եզրույթներին:

Բացի այդ, խնդրահարույց են հոդվածի նույն մասում սահմանված 3-րդ և 4-րդ կետերի ձևակերպումները, այն է՝ «Երևանի տարածքում գանձվող եկամտային հարկից մասհանումներ» և 4) «Երևանի տարածքում գանձվող շահութահարկից մասհանումներ», որոնք կարող են հակադրվել այն դեպքերում, երբ Երևանում գրանցված, սակայն այլ համայնքներում գործունեություն ծավալող կազմակերպությունների վճարած եկամտային հարկից կամ շահութահարկից կատարվում են մասհանումներ այդ համայնքների բյուջեներին:

Առաջարկ. Վերաձևակերպել տվյալ մասի նշված կետերը հետևյալ կերպ. «1) անշարժ գույքի հարկ՝ Երևանի վարչական տարածքում գտնվող հողի համար. 2) փոխադրամիջոցների գույքահարկ՝ Երևանի վարչական տարածքում գտնվող գույքի համար. 3) Երևանի տարածքում իրականացված գործունեությունից վճարված եկամտային հարկից մասհանումներ, 4) Երևանի տարածքում իրականացված գործունեությունից վճարված շահութահարկից մասհանումներ»:

- Հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով նշված են պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաները և ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումները (սուբվենցիաներ), մինչդեռ դրանք տարբեր բնույթի աղբյուրներ են և բյուջետային դասակարգմամբ էլ առանձին հոդվածներով են ներկայացվում:

Առաջարկ. Տվյալ մասը բաժանել 2 տարբեր աղբյուրների՝ այլ դոտացիաներ և սուբվենցիաներ:

- Հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով նշված են «վարկերի և փոխառությունների ձևով ներգրավված միջոցներ, ընդ որում՝ քաղաքապետարանի թողարկած պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված միջոցներ»:

Առաջարկ. *Հոդվածի տվյալ մասում «ընդ որում» արտահայտության փոխարեն գրել «այդ թվում»:*

- Հոդվածում նշված չեն նվիրատվությունը և նվիրաբերությունը՝ որպես բյուջեի ձևավորման աղբյուր՝ չնայած որ դրանք նշված են նախագծի այլ հոդվածներում:

Առաջարկ. *62-րդ հոդվածում ավելացնել նվիրատվությունն ու նվիրաբերությունը՝ որպես բյուջեի ձևավորման աղբյուր:*

Հոդված 63. Երևանի բյուջեի վարչական և ֆոնդային մասերը

- Հոդվածի **3-րդ մասի** համաձայն՝ Երևանի բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորվում են սեփական լիազորությունների հետ կապված կապիտալ (ՀՀ բյուջետային օրենսդրությամբ սահմանված իմաստով) ծախսերը, ֆոնդային մասի ծախսերի ֆինանսավորման նպատակով ներգրաված վարկերի, փոխառությունների և տեղաբաշխված պարտքային արժեթղթերի մարումը, Երևանի համայնքային (բյուջետային) երաշխիքներով երաշխավորված պարտքային պարտավորությունների չկատարմամբ պայմանավորված գումարների վճարումը, ինչպես նաև բյուջետային փոխառությունների տրամադրումը: Պետք է նշել, որ ներկայումս բյուջետային օրենսդրությունում «կապիտալ» բառի փոխարեն օգտագործվում է «ոչ ֆինանսական ակտիվներ» եզրույթը:

Առաջարկ. *Վերանայել դրույթի ձևակերպումը և փոխարինել «կապիտալ» բառը «ոչ ֆինանսական ակտիվներ» արտահայտությամբ:*

Հոդված 64. Երևանի բյուջեի պահուստային ֆոնդը

- Հոդվածի **4-րդ մասի** համաձայն՝ «Պահուստային ֆոնդերը կարող են օգտագործվել միայն ավագանու որոշմամբ: Բյուջետային տարվա առանձին ժամանակահատվածներում վարչական բյուջեում առաջացող պակասուրդի ֆինանսավորման նպատակով ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցները մինչև նույն բյուջետային տարվա ավարտը ամբողջ ծավալով Երևանի բյուջեի ֆոնդային մաս չվերադարձնելու դեպքում քաղաքապետը պետական լիազորված մարմնի հետ համատեղ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մշակում է այդ գումարները ֆոնդային մաս վերադարձնելու ծրագիր՝ մեկ բյուջետային տարվա կտրվածքով: Ծրագրի իրականացման ժամանակահատվածում դա Երևանի բյուջեն կազմելու հիմք է: Այդ դեպքում պետական լիազորված մարմինը, բացի իրավական վերահսկողությունից, մշտական վերահսկողություն է իրականացնում ծրագրի կատարման ընթացքի նկատմամբ բյուջետային տարվա առանձին ժամանակահատվածներում վարչական բյուջեում առաջացող պակասուրդի ֆինանսավորման նպատակով ներգրաված ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների ֆոնդային մաս չվերադարձված գումարները

վերադարձնելու ծրագրի իրականացման առնչությամբ»: Տվյալ դրույթը խիստ խնդրահարույց է՝ ավագանուն այս որոշումների կայացմանը չներգրավելու հիմքով:

Առաջարկ. Վերանայել հողվածի տվյալ մասի ձևակերպումը՝ բացառելով չհիմնավորված ընթացակարգերը, ինչպես նաև սահմանելով ավագանու ներգրավվածության պահանջ:

Հոդված 67. Երևանի բյուջեի կատարումը

- Հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքապետը Երևանի բյուջեի հիման վրա ճշտում է քաղաքապետարանի աշխատակազմի, դրա կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների և քաղաքային ենթակայության կազմակերպությունների խնդիրները, հաստատում է դրանց դրամարկղային գործառնությունների եռամսյակային կամ ամսական պլանները»: Անհասկանալի է, թե ինչ խնդիրներ է ճշտման անհրաժեշտություն է առաջանում քաղաքապետի կողմից բյուջեի հաստատվելուն հաջորդող փուլում:

Առաջարկ. Վերանայել հողվածի տվյալ մասի ձևակերպումը և բացառել չհիմնավորված ընթացակարգերը:

Հոդված 69. Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունը

- Հոդվածի 1-ին մասով սահմանված է. «Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է ավագանին, որն իրավագոր է ստուգելու յուրաքանչյուր բյուջետային գործողություն, աշխատանքների կատարման արդյունավետությունը և որակը, պահանջելու հաշվետվություններ՝ կատարված ծախսերի վերաբերյալ»: Բացի հաշվետվություն պահանջելու լծակից նախատեսված չեն հաշվետվողականության այլ մեխանիզմներ, այդ թվում՝ պարբերական եռամսյակային հաշվետվությունների քննարկում: Բյուջեի կատարման վերահսկողությունը միայն տարեկան հաշվետվությունների քննարկման միջոցով արդյունավետ չի կարող լինել, քանի որ տեղեկատվության ծավալը մեծ է, և որոշ խնդիրներ կարող են ժամանակավրեպ դառնալ, մինչդեռ եռամսյակային հաշվետվությունների քննարկումը կապահովեր ընթացիկ վերահսկողություն և արդյունավետ միջամտություն:

Առաջարկ. Հոդվածում ավելացնել նոր մաս հետևյալ ձևակերպմամբ՝ «Երևանի ավագանին հրավիրում է նիստ և քննարկում է բյուջեի կատարման եռամսյակային հաշվետվությունները, գնահատում է կատարողականը՝ ապահովելով բյուջեի ընթացիկ վերահսկողություն»:

- Հոդվածի 3-րդ մասով նախատեսված է. «Պետությունը Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հաշվեքննիչ պալատի միջոցով՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում»: Հոդվածը չի նախատեսում Հաշվեքննիչ պալատի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքների

քննարկում ավագանու կողմից և համապատասխան հաշվետվություններում առաջարկվող միջոցառումների իրականացման մեխանիզմներ: Ի լրումն, ՀՀ բյուջետային օրենսդրության համաձայն, բացի Հաշվեքննիչ պալատից, համայնքի բյուջեի կատարման վերահսկողություն իրականացնելու իրավասություն ունի նաև ՀՀ կառավարությունը՝ ՀՀ պետական բյուջեից համայնքի բյուջեին տրամադրված միջոցների ծախսման գծով:

Առաջարկ. Վերաձևակերպել դրույթը հետևյալ կերպ. «Պետությունը Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունն իրականացնում է ՀՀ կառավարության և ՀՀ հաշվեքննիչ պալատի միջոցով՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակում»: Նաև ավելացնել դրույթ «Ավագանին քննարկում է Կառավարության ստուգումների և Հաշվեքննիչ պալատի հաշվեքննության արդյունքում կապմված ելրակացությունները և վերահսկում դրանցում բացահայտված խնդիրների լուծման և ներկայացված առաջարկությունների իրականացմանն ուղղված միջոցառումների ընթացքը»:

Հոդված 70. Երևանի բյուջեի կատարման հաշվետվության հաստատումը

- Հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքապետը Երևանի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա ապրիլի 1-ը»: Չնայած որ Երևանի քաղաքապետարանն օրենքով սահմանված իր գործառույթներն իրականացնում է նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) և իր կողմից ստեղծված հիմնադրամների միջոցներով՝ դրանց բյուջեն, ինչպես նաև բյուջեի կատարողականի վերաբերյալ հաշվետվողականության պահանջներ նախատեսված չեն նախագծում:

Առաջարկ. Տվյալ դրույթը վերաձևակերպել և լրացնել, որ Երևանի քաղաքապետը Երևանի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հետ մեկտեղ ներկայացնում է իր ենթակայության ներքո գործող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) և իր կողմից ստեղծված հիմնադրամների կատարողականի և միջոցների կատարման վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը, իսկ դրանց առանձին կատարողականի հաշվետվությունները հրապարակվում են Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

Այս օրենքի նախագծի **2-րդ հոդվածով** առաջարկվում է ՀՀ հողային օրենսգրքի 57-րդ հոդվածում վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրումը և տիրապետումը» և հոդվածը լրացնել նոր՝ 8-րդ և 9-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ. «8. Համայնքի վարչական տարածքում համայնքի ավագանու կամ համայնքի ղեկավարի կողմից կայացրած վարչական ակտերի հիման վրա (առանց կառուցապատման կամ օգտագործման իրավունքի տրամադրման) պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տիրապետման թույլատրելի դեպքերը, կարգը, պահանջները, պայմանները, սահմանափակումները սահմանում է համայնքի ավագանին: 9. Սույն հոդվածի 8-րդ մասի իմաստով՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի տիրապետման իրավունքը համայնքի վարչական տարածքում համայնքի ավագանու կամ համայնքի ղեկավարի կողմից կայացրած վարչական ակտերի հիման վրա՝ առանց կառուցապատման կամ օգտագործման իրավունքի տրամադրման՝ հողամասը փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է: Սույն հոդվածով նախատեսված հողամասի տիրապետման իրավունքը ենթակա չէ պետական գրանցման և դադարում է համայնքի ավագանու կամ համայնքի ղեկավարի կողմից կայացրած՝ հողամասի փաստացի տիրապետման համար հիմք հանդիսացած վարչական ակտերի գործողության ժամկետի ավարտման պահից»:

Ընդհանուր առմամբ, առաջարկվող կարգավորման նպատակն ընդունելի է՝ տարածքի նկատմամբ կարճաժամկետ օգտագործման իրավունքի տրամադրման դեպքում շրջանցել իրավունքի պետական գրանցման փուլը և դրանով անհարկի չծանրաբեռնել քաղաքացիներին և/կամ տնտեսվարողներին: Սակայն առաջարկվող դրույթները չեն տեղավորվում քաղաքացիական իրավունքի ոլորտում ՀՀ օրենսդրական կարգավորումների տրամաբանության մեջ: Մասնավորապես՝ առաջարկվող կարգավորումը հակասում է ՀՀ հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասին, այն է. «Պետության և համայնքների սեփականության հողամասերը տրամադրվում են սեփականության, կառուցապատման կամ օգտագործման իրավունքով»:

Միևնույն ժամանակ, պետք է հաշվի առնել, որ գույքի տիրապետումը սեփականատիրոջ կամ տիտղոսային այլ տիրապետողի իրավագործություններից մեկն է: Այդ մասին հստակ նշված է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածում, համաձայն որի սեփականության իրավունքի բովանդակությունն են կազմում գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավագործությունները: Տիրապետումը՝ որպես իրավունք, տեղ չի գտել ՀՀ քաղաքացիական իրավունքի համակարգում և ՀՀ իրավունքում որևէ իրավական հետևանքներ չի առաջացնում: Իրավունքն իրավունք է միայն այն դեպքում, երբ այն օժտված է պաշտպանությամբ: Տիրապետումը պաշտպանվում է սեփականության իրավունքի կամ այլ տիտղոսի պաշտպանության շրջանակներում, ուստի արհեստականորեն լրացվում է օրենսդրությունը նոր կարգավորումներով, որոնք

անհրաժեշտությունը կարծում ենք առկա չէ և խնդիրը հնարավոր է հասցեագրել այլ իրավական լուծումներով:

Առաջարկ. Վերոգրյալով պայմանավորված՝ վերանայել նախագծով նախատեսված կարգավորումները և քննարկել օրենքով գործող օգտագործման (այդ թվում՝ անհատույց) կամ վարձակալության իրավունքի շրջանակներում հողամասերը ֆիզիկական անձանց կամ կապմակերպությունների տիրապետմանը հանձնելու հնարավորությունը այդ թվում՝ վարչական ակտերի ընդունման հիմքով՝ միաժամանակ նախատեսելով բացառություն նշված դեպքերի համար իրավունքի պարտադիր պետական գրանցում իրականացնելու պարտավորության մասով:

Նախագծի **5-րդ հոդվածով** առաջարկվում է օրենսգրքի 66-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածով սահմանված համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ուղղակի վաճառքը կարող է իրականացվել տարաժամկետ վճարման պայմանով՝ համայնքի ավագանու սահմանած դեպքերում և կարգով: Սույն մասով սահմանված տարաժամկետ վճարման պայմանով հողամասի ուղղակի վաճառքի դեպքում հողամասը գնորդին հանձնելու պահից մինչև դրա համար ամբողջական վճարելը համարվում է համայնքի մոտ գրավ դրված՝ ի ապահովումն հողամասի ուղղակի վաճառքի համար վճարելու գնորդի պարտավորության կատարման: Համայնքի գրավի իրավունքը ենթակա է պետական գրանցման»: Հաշվի առնելով, որ կարգավորումը նոր է և հիմնավորումներում ներկայացված չէ դրա ընդունման անհրաժեշտությունը հիմնավորող որևէ փաստարկ՝ հնարավոր չէ գնահատել նշված կարգավորման ներդրման արդիականությունը և նպատակը:

Առաջարկ. Նախագծի հիմնավորումներում ներկայացնել փաստարկված հիմնավորումներ կարգավորման ներդրման անհրաժեշտության վերաբերյալ:

**«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ**

Տվյալ նախագծի **1-ին հոդվածով** առաջարկվում է փոփոխություն կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածում, որով սահմանվում են վարչական տույժ նշանակելու համար գործող վաղեմության ժամկետները: Նախագծով առաջարկվում է գործող երկամսյա ժամկետը երկարաձգել՝ վաղեմության ընդհանուր ժամկետ սահմանելով 6 ամիսը: Առաջարկվում է Օրենսգրքի 37-րդ հոդվածում նախատեսել նաև, որ վարչական իրավախախտումը այլ անձի կողմից կատարելու փաստը հաստատվելու դեպքում նույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետը հաշվարկվում է համապատասխանաբար վարչական իրավախախտումը այլ անձի կողմից կատարելու փաստը հաստատվելու օրվանից:

Վարչական իրավախախտումների համար սահմանված վաղեմության ժամկետներին ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է թիվ ՎԴ/3864/05/20 վարչական գործով՝ մասնավորապես նշելով. «Անդրադառնալով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ այդ նորմով օրենսդիրը նախատեսել է անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հատուկ ժամկետներ, որոնց անցնելու դեպքում կատարված արարքը կորցնում է իր հանրային վնասակարությունը, և անձն ազատվում է վարչական պատասխանատվությունից, քանի որ այդ ժամկետի լրանալուց հետո վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելը դառնում է աննպատակահարմար: Փաստորեն, վաղեմության ժամկետն անցնելը վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք է. վաղեմության ժամկետն անցած լինելու դեպքում անձին վարչական պատասխանատվությունից ազատելն իրավասու վարչական մարմնի պարտականությունն է, այլ ոչ թե հայեցողական լիազորությունը: Ըստ այդմ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածը վաղեմության ժամկետի լրանալը դիտում է որպես վարչական գործով վարույթը բացառող հանգամանք՝ սահմանելով, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործ չի կարող հարուցվել, իսկ հարուցված վարչական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետները (տե՛ս Հուսիկ Մարգարյանն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/10555/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը): Վերահաստատելով նախկինում արտահայտված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետ սահմանելով՝ օրենսդիրն ունեցել է այդ ժամկետից դուրս անձին պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը բացառելու նպատակ՝ հիմք ընդունելով այդ ժամկետի ավարտից հետո կատարված արարքի հանրային վնասակարության կորուստը և վարչական տույժ նշանակելու աննպատակահարմարությունը»:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ պետք է եզրակացնել, որ վաղեմության ժամկետների սահմանումը ինքնանպատակ չէ, այն պետք է հիմնվի փաստարկված ուսումնասիրությունների և վերլուծությունների վրա՝ սահմանելով այս կամ այն արարքի

հանրային վնասակարության կողմնորոշիչ ժամկետները: Այնինչ, որպես ներկայացված փոփոխության հիմնավորում է բերվել այն, որ վարչական վարույթների գործերով գործնականում առկա են խնդիրներ, վարչական վարույթի ընթացքում պահանջվում են մի շարք գործողություններ և գործի լրիվ, բազմակողմանի քննության իրականացման համար օբյեկտիվորեն պահանջվում է, ըստ էության, ավելի երկար ժամանակահատված: Այս փաստարկները չեն կարող հիմնավորել անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների երկարաձգման անհրաժեշտությունը: Առավել անընդունելի է այս հիմնավորմամբ վարչական մարմնի կողմից ենթադրյալ իրավախախտին ճիշտ բացահայտելու համար վաղեմության ժամկետների հաշվարկի վերսկսումը:

Առաջարկ. *Յուրաքանչյուր դեպքում վարչական իրավախախտման վաղեմության ժամկետների փոփոխման առաջարկ ներկայացնելիս գնահատել տվյալ իրավախախտման առանձնահատկությունները, դրա սուբյեկտային կապը, հասարակական վնասակարությունը և այլ հանգամանքներ, որոնք որոշիչ են զանցանքի համար սահմանված վաղեմության ժամկետների ճիշտ հաշվարկման համար: Վարչական իրավախախտման վաղեմության ժամկետների երկարաձգումը որևէ կերպ չպայմանավորել վարույթն իրականացնող մարմնի մոտ առկա տեխնիկական, կազմակերպչական կամ այլ բնույթի խնդիրներով: Վաղեմության ժամկետների երկարաձգումը չկիրառել բոլոր իրավախախտումների նկատմամբ:*

Նախագծի **13-րդ հոդվածով** առաջարկվում է Օրենսգրքի 255-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ վերանայելով վարչական իրավախախտման արձանագրության կազմման հետ կապված հարաբերությունները, մասնավորապես՝ արձանագրությունը կազմել առանց ենթադրյալ իրավախախտի ներկայության և կազմված արձանագրությունը չներկայացնել վերջինիս ծանոթացմանը և ստորագրմանը՝ այս փուլում չբացատրելով վերջինիս իրավունքները և պարտականությունները: Միաժամանակ առաջարկվում է ներդնել վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության գրավոր ընթացակարգ՝ նախատեսելով, որ (...) նույն օրենսգրքով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը վարչական մարմնի կողմից իրականացվում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ վարչական մարմինը գալիս է եզրահանգման, որ գործն անհրաժեշտ է քննել բանավոր ընթացակարգով:

Գործող կարգավորման համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը պետք է կազմեն ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի ներկայությամբ, և վերջինս պետք է ստորագրի այն, իսկ եթե նա հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննելու իրավասություն ունեցող վարչական մարմինը (պաշտոնատար անձը) դրա մասին համապատասխան նշում է կատարում արձանագրության մեջ: Անձը, որին վերագրվում է ենթադրյալ վարչական իրավախախտումը, իրավունք ունի ներկայացնել բացատրություններ և դիտողություններ արձանագրության բովանդակության առթիվ, որոնք կցվում են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությանը, իսկ այն դեպքերում, երբ նա հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա կարող է

արձանագրությունում շարադրել այն շարժառիթները, որոնք իր համար հիմք են հանդիսացել՝ հրաժարվելու արձանագրությունը ստորագրելուց: Բացի այդ, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրություն կազմելիս անձին պետք է բացատրեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները և դրա մասին նույնպես համապատասխան նշում կատարեն արձանագրության մեջ: Տվյալ օրենսդրական պահանջն ինքնանպատակ չէ, այլ հնարավորություն է ստեղծում գործնականում ապահովելու անձի՝ պետական մարմնի առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը: Այսինքն, վարույթի այս փուլում անձին իրեն վերագրված իրավախախտման կապակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու պահին բացատրություններ ներկայացնելու, արձանագրության բովանդակության առթիվ դիտողություններ ներկայացնելու, ինչպես նաև իր իրավունքների մասին իրազեկ լինելու հնարավորությունից զրկելը հանգեցնում է անձի՝ պետական մարմնի առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի խախտմանը: Հաշվի առնելով, որ ՎԻՎ արձանագրությունը ապացույցի տեսակ է, կարևոր է, որ անձը հնարավորություն ունենա մասնակից դառնալու դրա կազմմանը և հենց այդ պահին ներկայացնի արձանագրվող խախտումների վերաբերյալ իր առարկությունները:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/0150/05/16 վարչական գործով 22.03.2019 թ. կայացրած որոշմամբ արձանագրել է. «... որ արձանագրության կազմման գործընթացին ենթադրյալ իրավախախտին մասնակից դարձնելու, արձանագրությունը վերջինիս ներկայությամբ կազմելու օրենքի պահանջը ձևական բնույթ չի կրում, քանի որ ենթադրյալ իրավախախտին իր իրավունքներն ու պարտականությունները բացատրելու՝ արձանագրությունը կազմող պաշտոնատար անձի պարտականությունը կարևոր երաշխիք է հանդիսանում ողջ վարչական վարույթի ընթացքում ենթադրյալ իրավախախտի իրավունքների իրացումն ապահովելու համար: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի ներկայությամբ կազմելու իմպերատիվ պահանջը նպատակ է հետապնդում նաև ապահովելու վարչական իրավախախտման պատշաճ սուբյեկտի պարզման հնարավորությունը: Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը ենթադրյալ իրավախախտումը կատարած անձի ներկայությամբ կազմելու պայմաններում հնարավոր կլինի պարզել վարչական իրավախախտման սուբյեկտին, որից հետո վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության արդյունքում վերջինիս հնարավոր կլինի ենթարկել վարչական պատասխանատվության»:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ գործող կարգավորմամբ վարչական իրավախախտման գործերի վարույթներ են իրականացնում մի շարք այլ պետական մարմիններ, և միայն Երևանի քաղաքապետարանի փորձի կիրառմամբ բոլոր վարչական մարմինների կողմից իրականացվող վարույթների ընթացակարգը փոփոխելը, առանց դրանց առանձնահատկությունները հաշվի առնելու, լի է այլ ոլորտներում մարդու հիմնարար իրավունքների խախտումների ռիսկերով:

Առաջարկ. Ենթադրյալ իրավախախտի մասնակցությունն արձանագրության կապման փուլում պետք է դիտվի ոչ թե որպես ձևական պահանջ, այլ մարդու իրավունքների պաշտպանության իրական երաշխիք՝ ապահովելով ենթադրյալ իրավախախտի՝ իր դիրքորոշումը, առարկությունները ներկայացնելու պատշաճ հնարավորությունը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության կապմանը ենթադրյալ իրավախախտին մասնակից չդարձնելու վերաբերյալ փոփոխությունը նախագծում չներառել, փոխարենը քննարկել այլ միջոցներով (օրինակ՝ Էլեկտրոնային եղանակով) անձին ծանուցելու հնարավորությունը: Միաժամանակ, որպես գործը բանավոր ընթացակարգով քննելու հիմք ամրագրել այդ մասին վարույթի մասնակցի կողմից համապատասխան դիմումի ներկայացումը:

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԱԳՐԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԶԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐԵՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ
ՆԱԽԱԳԾԵՐ**

Այս օրենքների նախագծերով առաջարկվում է փոփոխություններ կատարել նաև ՀՀ վարչական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերում, մասնավորապես՝ «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում կամ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցների օրինականացման կամ քանդման (ապամոնտաժման) հետ կապված վեճերով բացառել հայցի ապահովման այնպիսի միջոցի կիրառման հնարավորությունը, որը կհանգեցնի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում կամ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցների քանդման (ապամոնտաժման) արգելելուն»։ «Մինչև օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված միջնորդությունների հիման վրա կիրառված հայցի ապահովման միջոցները, որոնք հանգեցրել են համայնքային կամ պետական սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցների քանդման (ապամոնտաժման) արգելելուն՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից պետք է համարվեն վերացած»։

Առաջարկվող այս փոփոխությունները սահմանափակում են դատական համակարգի գործիքակազմը՝ արգելելով կիրառել հայցի ապահովման միջոցներ, որոնք կարող են ժամանակավորապես կանխել ինքնակամ կառույցների քանդումը համայնքային կամ պետական հողերում։ Սա վտանգում է արդար դատաբնության իրավունքը, քանի որ դատարանը զրկվում է իր գործառույթը լիարժեք կատարելու հնարավորությունից՝ անկախ գնահատելու հայցի ապահովման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով ներկայացված հիմքերը և հիմնավորումները։ Արդյունքում, կարող է առաջանալ իրավիճակ, երբ խախտվում է նաև անձի պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը։ Օրինակ, անձը վիճարկում է համայնքի կողմից ինքնակամ ճանաչված կառույցի կարգավիճակը, սակայն դատական գործընթացում նրան չեն կարողանում պաշտպանել շենքի, շինության ապամոնտաժումից, քանի որ դատարանը չի կարող կիրառել քանդման ժամանակավոր արգելք։

Նախագծով նախատեսվում է, որ օրենքի ուժի մեջ մտնելու պահին արդեն իսկ կիրառված հայցի ապահովման միջոցները պետք է համարվեն վերացած։ Սա, ըստ էության, հետադարձ ուժով վերացնում է նախկինում դատարանի որոշմամբ օրինականորեն կիրառված միջոցներ, ինչը. 1) խախտում է իրավական որոշակիության սկզբունքը, 2) հակասում է քաղաքացու իրավաչափ ակնկալիքներին (legitimate expectations), 3) զրկում է քաղաքացիներին արդեն իսկ ձեռք բերված պաշտպանությունից։ ՀՀ սահմանադրական դատարանը 09.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1213 որոշմամբ արձանագրել է, որ իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ

ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Միաժամանակ, հարկ ենք համարում անդրադառնալ նաև [վիճակագրությանը](#): Այսպես, 2024 թվականին ՀՀ վարչական դատարանի վարույթ է ընդունվել 16,019 գործ, որոնք առնչվել են պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց ակտերն անվավեր ճանաչելու հետ կապված իրավահարաբերություններին: Նույն ժամանակահատվածում ավարտվել է 13,203 գործ, որոնցից 10,431 դեպքում հայցը մասնակի կամ ամբողջությամբ բավարարվել է, իսկ միայն 2,337 գործով՝ ամբողջությամբ մերժվել: Այս վիճակագրությունը վկայում է, որ վարչական մարմինների գործունեության ընթացքում հաճախ թույլ են տրվում իրավական խախտումներ, որոնց արդյունքում ընդունված ակտերը հետագայում դատարանի կողմից ճանաչվում են ոչ իրավաչափ: Եթե նախատեսվող փոփոխությունները ուժի մեջ մտնեն, ապա կստեղծվի իրական վտանգ. ինչպես ֆիզիկական անձինք, այնպես էլ տնտեսվարող սուբյեկտները մինչև իրենց կողմից ներկայացված հայցի քննության ավարտը կպարտավորվեն կատարել վարչական ակտով սահմանված պահանջները, ինչը կարող է հանգեցնել էական վնասների: Ավելին, նույնիսկ եթե հայցը հետագայում բավարարվի, տվյալ անձինք ստիպված կլինեն լրացուցիչ վարչարարական կամ դատական գործընթացների միջոցով վերականգնել իրենց խախտված իրավունքները, ինչը կարող է երկար ժամանակ տևել և լրացուցիչ բեռ հանդիսանալ ինչպես հայցվորների, այնպես էլ վարչական և դատական համակարգի համար:

Առաջարկ. *Հանել նախատեսվող փոփոխությունները նախագծերի փաթեթից:*

Ներկայացված նախագծերի փաթեթով առաջարկվում է փոփոխություններ կատարել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում: Հաշվի առնելով, որ նախագծով հանրային քննարկումներ կազմակերպելու իրավասություն ունեցող մարմինների կազմը համալրվում է տեղական ինքնակառավարման մարմիններով՝ անհրաժեշտ է ներդնել նաև որոշակի վերահսկողական գործիք տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հանրային քննարկումներ չանցած նախագծերը Կառավարության կողմից չքննարկելու և դրանց վերաբերյալ հանրային քննարկում կազմակերպելու համար:

Առաջարկ. *Տվյալ օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ կերպ. «Հանրային քննարկման ենթակա՝ հանրային քննարկում չանցած, Կառավարություն ներկայացված նախագիծը Կառավարությունը վերադարձնում է այն ներկայացնող մարմին»:*

**«ԱՂԲԱՋԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՋՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ**

Այս նախագծի **14-րդ հոդվածով** առաջարկվում է 1-ին մասը շարադրել հետևյալ նոր բովանդակությամբ. «Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝ ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգից մինչև քսանհինգ Հայաստանի Հանրապետության դրամ»: Աղբահանության վճարի ամսական չափի սահմանումը՝ ըստ բնակարանի ընդհանուր մակերեսի, խնդրահարույց է, քանի որ որևէ ժամանակահատվածում առաջացած կոշտ կենցաղային թափոնների ծավալն ուղղակիորեն կախված է ոչ թե տվյալ բնակելի տարածքի մակերեսից, այլ այդ բնակարանում տվյալ ժամանակահատվածում փաստացի ապրող մարդկանց թվից: Մյուս կողմից, հաշվի առնելով, որ փաստացի բնակվող անձանց թվի հաշվարկն էլ ունի ճշգրտության հետ կապված իր խնդիրները, կարելի է որպես աղբահանության վճարի հաշվարկի ավելի քիչ խոցելի հիմք ընդունել բնակարաններում հաշվառված անձանց թիվը:

Առաջարկ. *Կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանել՝ ըստ բնակելի նպատակային նշանակության շենքերում, շինություններում և/կամ բնակարաններում հաշվառված մարդկանց թվով:*

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

Տվյալ նախագծի **2-րդ հոդվածով** առաջարկվում է Օրենքի 23-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից գնումը կարող է կատարվել մեկ անձից նաև համայնքի ավագանու սահմանած դեպքերում յուրաքանչյուր տարվա ընթացքում տվյալ տարվա համար հաստատված համայնքի բյուջեի ընդհանուր չափի մեկ տոկոս գումարի չափով գնումներ կատարելու համար: Ընդ որում, նշված չափի հաշվարկման մեջ չեն ներառվում սույն հոդվածով նախատեսված մյուս հիմքերով կատարված գնումների գումարի չափերը»:

«Գնումների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ «Գնումների կատարման նախընտրելի ձևը մրցույթն է, եթե գնման առարկան ներառված չէ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ նույն մասի 15-րդ կետով նախատեսված ցուցակում: Գնումները կարող են կատարվել գնման այլ ձևերով, բացառապես սույն օրենքով նախատեսված դեպքերում»: Օրենքի 23-րդ հոդվածով սահմանվում են այն դեպքերը (պայմանները), որոնց պարագայում կարելի է գնումը կատարել մեկ անձից գնման ընթացակարգով: Այդ դեպքերը տրամաբանական են, ընդունելի և ընկալելի, ու նաև համապատասխանում են մեկ անձից գնման միջազգայնորեն ընդունված չափանիշներին ([UNCITRAL Model Law on Public Procurement](#), [OECD Recommendation on Public Procurement Standards](#)): Առաջարկվող փոփոխություններով ստացվում է, որ համայնքի բյուջեի մինչև 1 %-ը կարող է հատկացվել մեկ անձից գնումներ կատարելու վրա՝ ի լրումն մեկ անձից կատարվող այն գնումների, որոնք կատարվում են ներկայումս օրենքի հոդված 23-ով սահմանված հիմքերով: Ստացվում է, որ համայնքը կարող է կատարել մեկ անձից գնումներ նաև այն դեպքերում, երբ հոդված 23-ով սահմանված ներկա, միջազգայնորեն ընդունված հիմքերը բացակայում են, ինչը հիմնավորված չէ և անընդունելի:

Առաջարկ. *Հրաժարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով առաջարկվող փոփոխությունից:*

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի [նախագիծ](#), որը սակայն հաշվի չի առնվել «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի և առնչվող իրավական ակտերի նախագծերի փաթեթում: Այդ փոփոխությունները հնարավորություն են տալիս համայնքի ղեկավարի, տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի, ավագանու անդամների և նրանց ընտանիքի անդամների մասնակցությամբ կազմակերպությունների համար սահմանելու քաղաքապետարանի գնումների գործընթացին մասնակցության արգելք:

Առաջարկ. *«Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելիս առաջնորդվել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից արդեն իսկ ներկայացված առաջարկներով՝ սահմանելով համայնքի ղեկավարի, տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի, ավագանու անդամների և նրանց ընտանիքի անդամների մասնակցությամբ կազմակերպությունների համար քաղաքապետարանի գնումների գործընթացին մասնակցության արգելք:*

**««ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ**

Այս օրենքի նախագծով առաջարկվում է փոփոխություն կատարել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 10-րդ մասում «Հանրապետության նախագահը և վարչապետը» բառերը փոխարինելով «Հանրապետության նախագահը, վարչապետը և Երևանի քաղաքապետը» բառերով, իսկ «Հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականները չեն կարող կատարել «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված աշխատանքները» բառերը փոխարինել «Պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականները չեն կարող կատարել «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված աշխատանքները» բառերով: Նշված փոփոխության արդյունքում Երևանի քաղաքապետին հնարավորություն է տրվում, ի թիվս ՀՀ նախագահի ու ՀՀ վարչապետի, ունենալ հասարակական հիմունքներով խորհրդականներ, ինչը հանրային ծառայության բարեվարքության պահանջների պահպանման տեսանկյունից խիստ խոցելի է, քանի որ հասարակական հիմունքներով խորհրդականների նկատմամբ չեն կիրառվում բարեվարքության պահանջների պահպանման օրենսդրական նորմերը, քանի որ նրանք չեն ճանաչվում պետական պաշտոնյաներ: Մինչդեռ, Երևանի քաղաքապետի դեպքում հասարակական հիմունքներով խորհրդականները ունենալու են «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված լիազորություններ և իրականացնելու են կառավարչական գործառույթներ, որը առաջ է բերելու հակասություն և շահերի բախման ու անհամատեղելիության պահանջների խախտման փաստացի իրավիճակներ: Բացի այդ, եթե ՀՀ նախագահի ու ՀՀ վարչապետի դեպքում հասարակական հիմունքներով խորհրդականների թվաքանակը սահմանափակված է, ապա Երևանի քաղաքապետի դեպքում այն անսահմանափակ է:

Առաջարկ. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագծից հանել 8-րդ հոդվածի 10-րդ մասում նախատեսվող լրացումները:

**«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ**

Այս օրենքի նախագծի **1-ին հոդվածով** «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» գործող օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներում առաջարկվող լրացումներն ու փոփոխությունները նախատեսում են, որ «Կառավարության նիստերին ներկա լինելու իրավունք ունեն ... Երևանի քաղաքապետը, ... ինչպես նաև վարչապետի հրավիրած այլ անձինք», «Կառավարության նիստի օրակարգի քննարկման ենթակա հարցերը զեկուցում են Կառավարության անդամները, Երևանի քաղաքապետի ներկայացրած նախագծերի դեպքում Երևանի քաղաքապետը, իսկ վարչապետի թույլտվությամբ՝ փոխնախարարները, Երևանի քաղաքապետի տեղակալները», «Կառավարությանը, վարչապետին ենթակա մարմինները, Երևանի քաղաքապետը Կառավարության որոշումների նախագծեր կարող են առաջարկել վարչապետին, իսկ այլ պետական, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները (բացառությամբ՝ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինների)՝ Կառավարության համապատասխան անդամին»:

Նշված խմբագրությամբ Երևանի քաղաքապետին վերապահվում են մի շարք արտոնյալ իրավունքներ, որոնք հակասում են կենտրոնական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների լիազորությունների տարանջատման սկզբունքին: Երևանի քաղաքապետը ստանում է Կառավարության անդամին բնորոշ քաղաքականության մշակման գործառույթ, որով նույնիսկ ՀՀ Կառավարության նիստերին ներկայացնում է իր կողմից մշակված օրենսդրական նախագծերը: Բացի այդ, Երևանի քաղաքապետը, ի տարբերություն այլ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների, ուղիղ հասանելիություն է ստանում վարչապետին:

Առաջարկ. «Կառավարության կառուցվածքում և գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվող փոփոխությունները չընդունել և ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների ու գործադիր իշխանության փոխհարաբերությունների սահմանադրական տարանջատման պահանջը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Հանրային քննարկման ներկայացված ««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերով իրավական կարգավորումների ծավալուն փոփոխություններ են առաջարկվում ոչ միայն Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենքում, այլ մեկ տասնյակից ավելի իրավական ակտերում: Խոսքը համակարգային փոփոխությունների մասին է, որոնք շոշափում են հարկայինից մինչև դատավարական հարցեր: Նման ծավալուն և էական փոփոխություններ նախատեսող նախագծերի փաթեթի առնչությամբ անհրաժեշտ է կազմակերպել ավելի լայն և ընդգրկուն հանրային քննարկում՝ բոլոր շահագրգիռ կողմերի, մասնագիտական հանրության և ոլորտի փորձագետների ներգրավմամբ, և կարծիքներ ներկայացնելու համար սահմանել բավարար ժամկետ: Միևնույն ժամանակ, Նախագծի հիմնավորումը չի անդրադառնում ներկայացված փաթեթում ընդգրկված որոշ օրենքների փոփոխություններին, ինչի արդյունքում անհնարին է դառնում իրականացնել առաջարկվող փոփոխությունների համապարփակ արդյունավետ գնահատում:

Առաջարկ. Ապահովել արդյունավետ հանրային քննարկումներ՝ ներգրավելով ոլորտային փորձագետներին, շահագրգիռ կողմերին և մասնագիտական հանրությանը՝ տրամադրելով նաև իրենց կարծիքը ներկայացնելու համար ողջամիտ ժամկետ՝ ոչ պակաս քան մեկ ամիսը: Բացի այդ, համալրել նախագծի հիմնավորումը՝ անդրադառնալով փաթեթում ներառված բոլոր փոփոխություններին, ապահովելով ներկայացված լուծումների նպատակահարմարության և իրավաչափության ամբողջական գնահատման հնարավորությունը:

Նախագծում բացակայում են ՀՀ արդարադատության նախարարության կողմից դեռևս 2024 թվականին մշակված ավագանու անդամների համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության պահանջների սահմանման, այդ թվում՝ ավագանու էթիկայի հանձնաժողովների ձևավորման ու գործունեության կազմակերպման, ավագանու անդամների վարքագծի կանոնադրի հաստատման, համայնքային հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց ու ավագանու անդամների կողմից անհամատեղելիության պահանջների ու այլ սահմանափակումների, դրանց պահանջների խախտումների համար պատասխանատվության միջոցների սահմանման մասով օրենսդրական փոփոխությունների փաթեթում առկա դրույթները:

Առաջարկ. Նախագծերի փաթեթը լրացնել ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված ««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքներում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագծերում ներառված [դրույթներով](#):